




241
n-20

150





Մ Ա Տ Ե Ն Ա Ռ Դ Ա Ր Ա Ն

ՄԱՆԿԱՆՑ



Ի Ի

ՌՌԶԱԼԻԱ

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT
WASHINGTON, D.C.



U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT
WASHINGTON, D.C.

ՌՌԶԱԼԻՍ.

ՓԱԼԵՐՄՈՅ ԳԱՂԲԻՆ

ՄԷԿ ԳԵՂԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ

1855

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ


ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

5-9805-1

Հրատարակող
Գրադարան
Երևան
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

2-196-2000



11.

Fig 49

АНОЗУЛТУ

Ռ Ռ Չ Ա Լ Ի Ա

Գ Լ Ռ Ի Խ Ա

Քրիստոսեանց մայր մը .

ՍԻԿԻԼԻԱ կղզին՝ Փալերմոյ քաղքէն
Քանի մը փարսախս հեռու , աղքատ գեղի մը
մէջ , ուր միայն ձկնորսք կը բնակէին , կար
մարդ մը որուն անունն էր Հերոնիմոս
Պանտուժժի : Այս մարդուս գրացիները
ամենեւին զինքը չէին սիրեր , և չէին կրնար
բարեկամութիւն ունենալ հետը , իր մոլու-
թեանցը՝ և խիստ ու հպարտ բնութեանը
համար , որ միշտ հրամայել կը սիրէր : Այս
մարդուս վրայ բարի խօսող մը չէր գրա-
նուէր , այլ ընդ հակառակն ամէն մարդ
չար կը պուցէր . վասն զի անունը ելած

էր՝ թէ ճարպիկ գող մըն է, և խեղճ ճամբորդներու արիւնը մտեր է, գիշերուան մօտ սրահուրտելով անտատին մէջ սոսկալի խորխորատի մը քով: Բայց հերոնիմոս վարպետութեամբ ծածկեց իր անօրէնութիւնները դատաւորներէն, որոնք շատ անգամ դատաստանի հանեցին զինքը, բայց չկրցան դատապարտել. վասն զի քաջութեամբ կը սրահուրտէր զինքը և կ'արդարացնէր:

Աս մարդուս արհեստն էր ձկնորսութիւն, որով իր՝ և ընտանեացը պիտոյքը կրնար աղէկ հոգալ, թէ որ խաղի ու կերութեամբ ետէ չըլար. աս երկու մոլութեանց գերի մատնուելով վաստրկած ստակը մէկէն ասոնց կը վատնէր, և իր խեղճ ընտանիքը միշտ նեղութեան մէջ կը տանջուէին:

Վերոնիքա իր կնիկը ամէնուն սիրելի էր ու շատ սրտիւ ունէր. իրեն դրացիքը ցաւակից կ'ըլային՝ որ այսպիսի անկարգ էրկան մը ձեռք ինկեր էր. ու ծածուկ կը ջանային քաղցրացընել իրեն վշտերը: Իրաւընէ Վերոնիքան ազնիւ խաթուն մըն էր՝ քաղցր բնութեամբ և քաղաքավար, որ իրեն մերարեբեալ բաներու մէջ սիրտով կը

Ժասայէր գեղացոյ : Աշխատանքի վարժած ըլլալով՝ մեծ փայլժ կ'ընէր , և ամէն ներդուծիւն յանձ կ'առնուր որ շմեռնի սովէն՝ ինքը և իր սիրելի աղջիկը . և աղքատութեամբ ուրիշ չճանրանայ : Ան գեղի կանանց մի միայն առաքինութեան օրինակ էր՝ իր կատարեալ աստուածապաշտութեամբը , ու առաքինութիւններովը . մանաւանդ իր ծանր վշտերուն մէջ՝ Աստուծոյ կամայը յանձնելով զինքը , առանց գանգտելու լուծեամբ կը համբերէր տանը թշուառութեանցը՝ որ էրկանը անկարգութիւնէն առաջ կու գար . Աստուծոյ գիմայը միայն կը բանար իր ամէն ներդուծիւնը՝ որ օրէ օր աւելնալու վրայ էր :

Հերոնիմոս չէր կրնար պատկուած ըլլալ Ա հրոնիքային հետ , թէ որ առաջուց քաղցրաբարոյ և առաքինի երիտասարդ մը չձևանար . բայց կարգուելէն վերջը՝ բողոքովն թողուց կեղծ գիմակը , և առանց ակնածելու իր կնկնէն կ'արհամարհէր անոր առաքինի վարքը : Արբեմն գրայիքը զարմանալով Ա հրոնիքային քաջասրբութեանը վրայ կը հարցնէին աս բարեպաշտ կնկան՝ թէ ուստի կը զօրանար

այնչափ նեղութեանց ու թշուառութեանց
համբերելու . իսկ ան քաղցրութեամբ պա-
տասխան կու տար թէ , երբոր մշտացս
ծանրութիւնը զօրութենէս մեր կ'երևնայ՝
մատահութեամբ Յիսուսի կը դիմեմ , որով
հոգիս նոր զօրութիւն մը կ'առնու : Ահա
աս է աղբիւրը ուսկից ինձի հարկաւոր ե-
ղած մխիթարութիւնը կը հանեմ համբերե-
լու համար : Իսկ հարցնողները՝ աս պա-
տասխանէն շատ կը շահուէին , ու օրինա-
կին հետևելով կը ջանային նոյն համբերու-
թիւնը ստանալ :

Աւթը տարի այսպէս մշտերու , ու նե-
ղութեանց մէջ անցուց . օր աւուր միայ
խեղճ Վ երոնիքային նեղութեանց շղթային
օղակը կ'եւելնար , չգիտնալով ամենևին
թէ երբ ասոնց վախճան պիտի ըլլայ :

Աս խեղճ կնկան աղջիկ զաւակ մը պար-
զեց Աստուած , անունը դրաւ Ռոզա-
լիա , որ Փալերմո քաղքին պաշտպան
կուսին անունն էր : Առաքինի մօրը բոլոր
հոգը և փոյթը ան էր՝ որ բարի կրթութիւն
մը տայ զաւակին . և յիրաւի բարի բարի
յոյսերով շատ թեթեւոց աղջիկը իր տա-
ռապետ մօրը մշտերը : Հատ անգամ՝

երբ անայիտան էրիկը խաղի ետևէ կ'ըլ-
լար, Վ Երոնիքան ու իր աղջիկը ձեռուրնին
երկկնքը վերցուցած կ'աղաչէին զԱստուած
որ պահէ Հերոնիմոսը, ու ներէ անոր
ծանր մեղքերուն՝ առանց սրատեկու զինքը
չսրաչար: Արբեմն իրենց սնական աշխա-
տութիւնը թեթևցնելու և ցաւերնին մոռ-
նալու համար, Վ Երոնիքան բարեսլաշտ երգ
մը կ'երգէր. Առգալիա սլաթի աղջիկն
ալ իր գեղեցիկ ձայնը ձգած կ'ընկերէր
մօրը. աս էր իրենց երջանկութեան ժա-
մանակը, ինչուան որ Հերոնիմոս տուն կը
դառնար նախատեղով զիրենք, ու աղքատ
տնակին մէջ ամէն բան տակնուվրայ ընե-
լով: Օր մը երբոր Առգալիա ու իր մայրը
Վ Երոնիքան նստեր էին սօսի ծառի մը
շուքին տակ, որ իր մեծամեծ ճիւղերը կը
տարածէր խցին վրայ, աղջիկը դարձաւ
մօրը ըստ. — Ահա այսօր սրբուհի Առ-
գալիա իմ սլաշտպանիս տօնին օրն է, կը
փափաքիմ զիանալու իր վարքը. հրաման
քող քիչ մը առաջ ինձի ըսիր որ քրիստո-
նեայք մկրտութեան ժամանակը կ'առ-
նին սուրբի կամ սրբուհւոյ անուն մը, որ
անոնց առաքինութեանցը հետեւին. ուստի

խնդրեմ շնորհք ընէիր ինձի պատմելով իմ
 պաշտպան սուրբիս վարքը : Բարեպաշտ
 մայրը ծիծաղելով մը պատասխան տուաւ .
 կեցի աղջիկս հիմա փափաքդ կը կատա
 ընմ : — Աս սրբուհի Առողալիա կոյսը Ալ
 կիլիայի երեւելի իշխաններէն մէկուն աղ
 ջիկն էր , որ մեծին Աարօլոսի ցեղէն
 կ'ինջնար : Փալերմն քաղաքը ծնաւ Առ
 զալիա՝ և ի մանկութենէ զցուց առաքինու
 թեանց զեղեցիկ նշանները : Հօրը տունը
 աս կոյս աղջկան դիմացը կը դնէր ամէն
 փափկութիւն աշխարհիս , զուարճութիւն
 և հարստութեան փառքը . Առողալիա հոն
 կրնար վայելել մեծութեան հաճոյքը ու գրը
 զանքը , ուր ամէն բան աշխարհային երջան
 կութեան կը հրաւիրէր զինքը . բայց զգաւ
 տը օրիորդը սուրբ կրօնքի մէջ կրթուած ըլ
 լալով՝ քաջութեամբ հեռացուց սիրտը ան
 ցաւոր բերկրութենէ և սուտ հրապոյրներէ .
 հաստատուն բարեաց ետեւէ եղաւ՝ որոնք
 քրիստոնեայ կուսի մը արժանի փափաք
 ներ էին : Ի՛նչ օգուտ կ'ըլլար իրեն , եթէ
 աշխարհիս հեռեկալով հարստութեան մէջ
 կորսնցնէր երկնքի վայելքը և յախտնա
 կան երանութիւնը : Ի՞նչպէտ ամէն կող

մէն առջևը կ'ելլէին՝ փափկասուն աղջկան մը թեթեամտութիւնը փառելու գրգիռներ, բայց ինքը ճշմարիտ բարւոյն հաստատուն կամք մը ունենալով մէկէն բարձրագոյն կատարելութեան հասաւ, և իր աստուածսիրութիւնը աշխարհքիս մոլութեանց դէմ ատելութիւն մը բորբաքեց սրտին մէջ :

Բնութեամբ կը յօժարէր առանձնական կեանքի, ուստի օր մը հօրը սլալատէն փախաւ՝ գնաց քաղաքէն իրեք մղոն հեռու Սօնդէ Բէրէկրին ըսուած լեռանը փայհոն անտառի մը մէջ առանձնանալով ճրգնութեամբ ու խիտ կեանքով ապրեցաւ, բոլորովին նուիրելով զինքը Աստուծոյ : Իր բարեպաշտական կրթութիւններուն մէջ երբեմն ձեռագործի ետեւէ կ'ըլլար և ա՛նով իր կերակուրը կը ձարէր . խոնարհութեամբ կը ճնշէր մարմինը, ամէն բանէ զինքը զրկելով և անմահ հոգւոյն համար միշտ ճգնելով :

Այսպիսի սուրբ կեանք մը ի՞նչ բարի օրինակ կու տայ մեզի՝ աշխարհքս արհամարհելու : Միւրական աղջիկս, կրնա՞նք արդեօք գանգտիլ մեր աղքատութեանը

վրայ, երբոր կը տեսնանք սրբուհին Առ-
զալիս՝ հարուստ իշխանուհի մը մեծամեծ
թագաւորներու ցեղէ, որ Յիսուսի սիրուն
համար աղքտցաւ, ու աշխարհքիս փառ-
քէն ու բարիքներէն փախչելով՝ ետևէ ին-
կաւ ան բարւոյն, զոր շատերը կ'արհամա-
հեն և տարակուսով կը փախչին: Առզա-
լիս մեռաւ սրբութեամբ յամի տեառն
1160. մարտին շ ծածկած մնաց մինչև
1625ին երբ հրաշքով յայտնուեցաւ: Ա-
հա աս սուրբ կոյսն է մեր մայրաքաղաքին
պաշտպանը, որ շատ անգամ մահաբեր
հիւանդութիւններէ և մեծամեծ վտանգնե-
րէ խալցուցեր է աս դաւաոր:

Ահաւասիկ, աղջիկս, քու անուանդ
սուրբին վարքը. աս քիչը՝ բաւական է
մեզի շատ բաներ սորվելու, մանաւանդ իր
օրինակին հետևելով՝ սիրել աղքատութիւ-
նը. և յիշել միշտ թէ մեր փրկիչը Յիսուս
ամենայն առաքինութեանց օրինակը, ար-
ժանի համարեցաւ ախոռի մը մէջ ծնանիլ,
ու երանի տալով՝ երկնքի արքայութիւնը
խոստացաւ անոնց՝ որոնք հոգւով և սրտով
աղքատութիւնը կ'ընտրեն. որովհետև ինքը
աղքատ ապրեցաւ աշխարհքիս վրայ, ու

ամէն բանէն զրկուած մեռաւ խեղճութեամբ . որպէս զի մեզի սիրտ տայ արհամարհել աշխարհիս մնուտի փառքը և մեծութիւնը :

Ռողալիս ուշադրութեամբ միտ դրաւ մօրը սլատմածներուն . ու սրտանց առաջադրեց համբերել ամէն զրկանաց որ շատ անգամ կը հանդիպէր , ու գանգատ մը սրտէն չանցընել՝ Յիսուսի նմանելու համար : Աւ այսպէս քաջասրտութեամբ իր սրտի սիրտը և կամքը նուիրեց Աստուծոյ բողոքովին :



ԳԼՈՒԽ Բ

Բարեպաշտ յորոր .

ՈՒՋԱԼԻԱ մեծցաւ իր բարեպաշտ մօրը աչքին առջևը , որուն մի միայն մխիթարութիւնն էր իր զուարթ բնութեամբը , մարութ վարքովը ու սխառաատ հնազանդութեամբը . և ամէն բանէն եւել իր հրեշտակային սրբութեամբը : Այլ իկը սաստիկ կը սիրէր իր մայրը Վ Էրոնիքան , որ կարծես թէ միայն իր սիրուն աղջկանը համար կ'ապրէր . բայց խեղճ աղջիկը կը վախէր հօրը դիմացը ելել . վասն զի հայրը ամէն անգամ որ տուն կը մտնէր՝ միշտ լեղի խօսքերով ու խստութեամբ կը վարուէր անոր հետ :

Օր մը աղջիկը ըսաւ Վ Էրոնիքային , Արեւի մայրիկ , հայրս զիս չխօրեբ ինչպէս որ հրամանագր կը սիրես , ու ամենևին աղէկ աչքով չնայիր ինձի . անոր համար քանի որ դիմացը կ'ելեմ վրաս դող մը կու գայ . ար-

դեօք ի՞նչ ըրած ունիմ որ այսպէս ատելի եղած եմ իրեն : — Ար խաբուիս աղջիկս , ըսաւ մայրը՝ գրկելով ու պագնելով Առղայլանն , հայրդ կը սիրէ գքեզ ինչպէս որ ես , պէտք չէ կասկածիս թէ իրիկուսները տուն գարձած ժամանակը ցրտութեամբ վրագ կը նայի , վասն զի հոգնած ըլլալով չկրնար ցուցրնել քեզի իր սրտին սէրը : Դու մի գաղբիր զննքը սիրելէն , ու միշտ յիշէ Աստուծոյ պատուիրանքը . « Պատուեալ զհայր քո և զմայր , զի երկայնակեաց լինիցիս » : Արտաքին երևոյթէն դատաստան պէտք չէ ընել , որ շատ անգամ կը խաբուի մարդս , այլ միշտ աղէկ մտածելու է ընկերոջը վրան . թէպէտ և արտաքին երևոյթը անոր դէմը ցուցրնէ , թէ որ աս պարտաւորութիւնը խստութեամբ կը պահանջուի օտար անձանց վրայ , ո՞րչափ առաւել մեր ծնողացը վրայօք :

Առղայլիս խոստացաւ մօրը տուած խնւացի խրատները պահել , ու անոնց յարմար ապրիլ . առաքինի աղջիկը օրէ օր կը մեծնար դաշտի շուշանի պէս զոր բընութիւնը զարգարել է անուշ գոյներով . օրէ օր առաքինութիւնը վրան կը փայլէր .

արդար էր և սարգ մտօք, ու անմեղ սրբ-
 տիւ : Մեծ երջանկութիւն էր իրեն՝ եր-
 բօր իրիկունքը արևը վերջի ճառագայթները
 ձգելու ատեն չորս կողմի եղած լեռներուն
 վրայ, կը նստէր մօրը քով սօսիի ծառին
 տակ զուարճանալու : Աւ մայրը կը ցցընէր
 իրեն Վատնա լեռը հեռուէն որ կը միտար,
 և ինչպէս հսկայ մը բարձրացած ուրիշ
 լեռներէն վեր, որ երբեմն հեղեղի պէս բո-
 ցախառն ծուխ կը ժայթքէր դուրս, Աս-
 տուծոյ մեծութեանը վրայ խօսելով կը
 նկարագրէր իրեն արքայութեան մէջ սրբոց
 ունեցած երջանկութիւնը, ու դժոխքի
 սաստիկ կրակը՝ որուն յայտնի օրինակը
 կրնար ըլլալ Վատնա հրաբուղիսը : Արբե-
 մն երբեմն Վերոնիքան աղջկանը կը յիշէր
 աւագերէցին գեղեցիկ խրատները՝ որ քա-
 ըողներու մէջ կը վարդապետէր. դարձեալ
 կը բացատրէր իրեն մեր սուրբ կրօնքին
 ճշմարտութիւնը, և կը ջանայր անոր մա-
 քուր սրտին մէջը տպաւորելով միտքը լու-
 սաւորել. ու ամէն առթի մէջ կը նայէր
 աղջկան օգուտ մը հանել, և առաքինու-
 թեան մէջ կը թել զինքը. միշտ քաղցրու-
 թեամբ կը սխառասխանէր աղջկանը ծուս

ու մուռ հարցմունքներուն . խոհեմութեամբ
 առաջքը կ'առնէր անոր անուատչած ախոր
 ժակներուն , ուշ կը դնէր իրեն զննութեանց
 ու միշտ աղէկ կը թու թիւն մը տալու ետեւ
 էր :

Արբոր Ա Էրոնիքան այսպէս կը զուար
 ճանար քաղցր ուրախութեամբ աղջիկը
 դաստիարակելով . մտքէն չէր ելար Հե
 րոնիմոսը որ խախուտ նաւակով մը կ'աշ
 խատէր ծովուն միայ հազար վտանգնե
 ըու մէջ : Աւր է արդեօք կ'ըսէր ինքն
 իրեն , կարելի է որ ծովու եզերքէն հեռու
 ընդարձակ ծովու մէջ սլաքաւոր , չկրնալով
 բան մը ձեռք ձգել , գուցէ կեանքն ալ
 վտանգի մէջ է : Ա՛հ , ի՛նչպէս հետը
 չեմ իրեն օգնելու և անոր նեղութիւնը թե
 թե ցրնելու : Այսպէս հաւատարիմ կնիկը ան
 հանդիստ կ'ըլլար Հերոնիմոսին միշտը և
 վտանգը մտածելով . երբոր անիկայ գինե
 տուն նստած ուրիշ քանի մը խաղամուլ ըն
 կերներով կը մսխէր իր ծանր աշխատանայ
 վաստակը , գինիով , խաղով ու երգերով :
 Այս իրիկունը երբոր թշուառականը գինեոյն
 մէջ թաթխուած տուն կը դառնար , ու կնի
 կը և աղջիկը գիւմայը կ'ելլային սիրով ըն

Երանդատրան
 ՊԵՏԵՆ
 ՅՈՒՌԷ

2196-2008

դռնելու զինքը. ան իր սուլորական խատու
թեամբը կ'արհամարհէր իրենց սէրը՝ իբրև
ձանձրացած անոնցմէ, ու կերակուրը կե-
րածին սէս կը դառնար զինետուն իր ըն-
կերներուն քով. իսկ Վ Երոնիքան տեսնե-
լով անոր երթալը կու լար ու կը հառա-
չէր :

Այսպէս տատուերկու տարի Վ Երոնի-
քան զարմանալի առաքինութեամբ համ-
բերեց ծանր ծանր մշտերուն . բայց անըզ-
գաղասէս սկսաւ տկարանալ հալիլ մաշիլ
քաշած նեղութիւններով :

() ր մը ծանր փայտի խուրձ մը շարկած
անտառէն դառնալու առնն , ուժը կտրե-
լով ինկաւ և գլուխը մերաւորեց , ու չկրցաւ
քաշելով տուն դառնալ . իրեն ուղեկից դրա-
ցիները բերին զինքը տուն : Ամէն օգնա-
կանութենէ զրկուած ըլլալով՝ սատտիկ ցա-
ւեր կ'իսմանար, ու օրէ օր տկարանալու միայ-
էր : Վ երջի թողակը խնդրեց ու շատ ջեր-
մեռանդութեամբ առաւ , և ետքը սկսաւ
մահուան սրտորստուիլ : Հերոնիմոս տես-
նելով իր կնիկը հոգեխաբ մահուան գուռը
հատած՝ առ առջի անգամը քիչ մը սէր
չյուց , մտայաւ անկողինին՝ հարցուց թէ

ինչպէս է . բայց մեռնելու մտ տեսնել
լով զինքը սիրտը շատ ելաւ :

Վ երոնիքան քովի եղած մարդիկը խցէն
դուրս հանել տուաւ , նոյնպէս իր սիրելի
աղջիկն ալ . ետքը քիչ մը շունչ առնելով
որչափ որ կարելի էր՝ աս խօսքերը սկսաւ
զրուցել էրկանը ողորմելի ձայնով մը .

— Սիրելիդ իմ Հերոնիմոս , կը տեսնաս
որ Մատուած զիս այսպէս շուտով իրեն կը
կանչէ , հոս անցուցած կեանքէս լաւագոյն
կեանք մը պարզեցու ինձի՝ ինչպէս որ կը
յուսամ : Դու ինձի շատ նեղութեան պատ-
ճառ եղեր ես , բայց ես ամենեին չեմ մեղա-
դրեր դքեդ . ահա Մատուծոյ դիմացը բո-
լոր սրտովս թողութիւն կու տամ բրած չա-
բութիւններուդ , միանգամայն շնորհակալ
եմ քեզմէ ընդունած բարիքներուս համար :
Ես միշտ աղօթք եմ ըրեր Մատուծոյ՝ որ
թողութիւն տայ մեղքերուդ , և անանկ
շնորհք մը՝ որ դարձի դաս : Ար թողում
զքեդ ցաւերու միջ . նմանապէս իմ սիրելի
աղջիկս Առզալիան , որ միկ հատիկ մխիթա-
րութիւնս էր : Ո՛վ Հերոնիմոս՝ զժամ խեղճ
լաւկիդ վրայ , հայր ու մայր եղիր իրեն .
պահէ զինքը վտանգներէ , սիրէ ինչպէս

աչքիդ լոյսը, հեռացուր իրմէ ամէն մոլ
լուծիւն, ու իր անմեղութեան ծաղիկը
անթառամ պահէ: Արեսէ չձգես զինքը,
մտածէ որ անոր ու քու հոգւոյդ համար
սոսկալի պատասխան պիտի տաս Աստու-
ծոյ: Գծող որ քաղցրութեամբ հանդիստ
մեռնիմ իմանալով որ կատարես պիտի իմ
փափաքներս, ու փոյթ պիտի ունենաս
աղջկանդ և քու հոգւոյդ փրկութեանը:

Հերոնիմոս սիրտը սաստիկ լեցուելով,
խոստացաւ Ա հերոնիքային տուած խրատ-
ները պահել ու խելքը գլուխը ժողովել:

Քիչ մը մտածելէն վերջը հոգևւարք
խեղճ կնիկը սկսաւ ըսելու. Ար մտածեմ
սիրելի որ դու չես ուզեր խաբել քու հոգե-
ւարք ընկերդ, խոստանալով իրեն ան բա-
ները որոնք չուզենաս ընել: Քու համար
ձակ ու անկարգ կեանքդ էր՝ որ ինչուան
հիմա զիս անհանդիստ կ'ընէր, ու կը կար-
ճեցնէր կենացս օրերը: Միտքդ հաստատ
գիր Հերոնիմոս՝ որ աս քու վարքդ յաւի-
տնական կորստեան գբել կը տանի: Ա-
մենեին աղօթք չես ընիր, աղամայ կ'երթաս
եկեղեցին աստուածային սրաշտոնին ներկայ
դանուելու. բոլոր վաստակդ խաղի կու

տաս , միշտ գինով ես անառակ մարդկանց
հետ , որոնք կ' ուզին քու ձեռաց վաստակդ
քեզմէ խել , պատիւդ փճացնել ու հո-
գւոյդ խաղաղութիւնը և Մատուծոյ շնորհ-
քը կորսնցնել : Միրոս սաստիկ ցաւերով
կը խշխշար՝ երբոր կը տեսնայի ամէն տարի
զատկին օրը , երբ քրիստոնեայք պարտաւո-
րեալ են հ' նազանդելու եկեղեցւոյ կանոնին ,
ու աղէկ խոստովանանքով մը պատրաստել
իրենց սիրտը Քրիստոսի փրկչին մերոյ հա-
ճոյական բնակարան մը . դու ոտքի տակ
կ' առնէիր աս ահաւոր պատուիրանքս ու
հայհոյութեամբ կ' անարգէիր : Բայց Մա-
տուած ըսեր է , “ Այլ որ եկեղեցւոյն չսեր ,
անիկայ ձեզի իբրև հեթանոս ու մաքսաւոր
սեպուի ,, : Միօրէն չար կեանքի մը վերջը՝
յաւիտենական դատապարտութիւնն է :
Այլ Հերոնիմոս խղճմտանքդ շտկէ . ես
կեցիր շար ընկերներէդ՝ որոնք կը կորսնցը-
նեն զքեզ , զգուշացիր նաև ծածուկ շա-
րութիւն ընելէն . վասն զի Մատուծոյ աչքը
զքեզ կը տեսնայ միշտ . կ' աղաչեմ զքեզ Յի-
սուսի անունովը՝ որ խաչին վրայ մեր ամե-
նուս և քու հոգւոյդ փրկութեանը համար
մեռաւ , և իր անգին արիւնովը փրկեց զմեզ :

Ար տեսնես ինչպէս քու բարեոյդ համար
կը տառապիմ . խոստացիր ինձի որ ասկէ
ետքը խելքդ դուրսդ կը ժողլիս . ինձի խոս-
տացիր որ սրտանց կը սիրեմ դքեզ : Աոստ-
մունքիդ հաստատութեանը նշան ձեռքդ
տուր , որ աս վերջի անգամն ալ պագնեմ :

Հերոնիմոս ակամայ երկնցուց ձեռքը , և
Վ Երոնիքան տաք տաք արցունքովը թրը-
ջեց , ու սոսկալի դող մը եկաւ բոլոր մար-
մնոյն վրայ . արցունքով լցուած աչքերը
դարցուց էրկանը վրայ ըսելով , Վ վ սիրելիդ
իմ Հերոնիմոս , կարծեմ թէ արիւնաշաղախ
ձեռքեր կը շոշափեմ : Հերոնիմոս բարկու-
թեամբ մը ըսաւ , Անիկ , աս ինչուան երբ
զիս պիտի տանջես , ու ձեռքը ուզեց քա-
շել . բայց Վ Երոնիքան չթողուց , ու սիրա-
լիր աչքով մը նայելով վրան ըսաւ , — Հե-
րոնիմոս , Հերոնիմոս , կ'աղաչեմ դքեզ ետ
կեցիր մոլորութիւններէդ , հոգ ունեցիր
հոգւոյդ փրկութեանը՝ քանի որ ժամանակ
ունիս :

Բայց մեղքերու մէջ թաղուած Հերոնի-
մոսը՝ չկրցաւ վերցնել աս խրատները ու յան-
դիմանութիւնը , որ ի սիրոյ շարժեալ կը
խօսէր Վ Երոնիքան . իր կնկանը քաղցր սի-

րոյն հեռացաւ , և շուտ մը ելաւ խցէն սոսկալի հառաչանքներով՝ որպէս թէ սատանան հալածէր զինքը : Ա երոնիքան երկրն ցուց ձեռքերը դէպ ի էրկանը՝ որ կը փախչէր , ու ողորմելի հողեւարքի ձայնով մը սկսաւ հառաչել , և մերջի ժամը հասած՝ պաղ քրտինքներ թափելով ինկաւ անկողինին մէջ — Ո՛վ Աստուած փրկիչ իմ , կանչեց , ապաւէն իմ և մխիթարութիւն , զժամ հերոնիմոսին , թող որ ես չարչարուիմ անոր համար , միայն թէ փրկութեան հասնի ան խեղճը :

Ռոզալիա՛ որ դրանք քով նստեր էր , մօրը ձայնը լսելուն պէս լալով ներս վազեց : Մի լար աղջիկս , ըսաւ իրեն հողեւարք մայրը , ու լսէ մօրդ մերջի խօսքերը : Դու ինչուան հիմա իմ մխիթարութիւնս ու երջանկութիւնս էիր , ցաւերու մէջ կը թողում գրեզ , սիրելի աղջիկս , բայց քաղցր յուսով մը մխիթարուէ՛ որ Աստուած գրեզ ձեռքէ չժողու պիտի . Զանայ միշտ արժանի ըլլալու իրեն շնորհացր ու հաճոյ իր առջևը . յաջողութեան և ձախտողութեան մէջ միշտ հաւատարիմ եղեր իրեն պատուիրանքները պահելով :

Ամէն օր Աստուծոյ օգնութիւնը կանչէ
քեզի, ու ամէն պիտոյիցդ մէջ իրեն գլխի,
անդադար աղօթք ըրէ՝ խնդրելով Աստու-
ծոյ շնորհաց օգնականութիւնը՝ որուն կա-
րօտ ես միշտ : Մօրդ հոգւոյն համար ալ
աղօթք ընես, մանաւանդ խեղճ հօրդ փր-
կութեանը համար : Ամէն օր քու առջի
մտածմունքդ ու սրտիդ ամէն փափաքը
Աստուծոյ համար ըլլայ . Աստուծմէ վեր-
ջը սիրէ քու հայրդ ինչպէս որ զեա սիրե-
ցիր, բնաւ չթողուս զինքը . թէ որ դժ-
բաղդութեամբ մը կորսնցընես, ետէ ե-
ղի՛ր՝ փնտրուէ ինչուան որ դանաս : Ամէն
բանի մէջ գործակից եղիր իրեն, բաց ի
մեղաց . թէ որ մերժէ գրեզ կամ խստու-
թեամբ վարուի հետդ, դու սէրդ չպակսե-
ցընես իրմէ . նայէ որ յաճախ սուրբ խոր-
հուրդին մերձենաս, որպէս զի Աստուծոյ
հետ միանալով դանաս քեզի հարկաւոր
զօրութիւն մը համբերելու աշխարհքիս
ժանր վշտերուն, որ ինչպէս կը կասկա-
ծիմ, քեզի ալ դառնութեամբ պիտի դան :
Աղջիկս, ծունկ չողէ հիմա, որ վերջի օր
հնութիւնս առնես . կը յանձնեմ գրեզ մաս-
նաւորապէս սուրբ աստուածածնոյ պաշտ-

սրանութեանը, որ ինքը կոչան Մարիամ
քեզի մօր տեղ ըլլայ. միշտ պատուէ զինքը
ու ջանայ որ իրեն առաքինութեանցը հե-
տևող ըլլաս :

Չկրցաւ խեղճ հոգեվարքը եւելի եր-
կրնցնել խրատը, և ուժը կտրեցաւ. դող-
դոջիւն ձեռքով մը օրհնեց աղջիկը, որ ան-
միտիժար կու լար. և ինքը բորբոքեալ սի-
րով պագնելով սուրբ խաչը հոգին աւան-
դեց սրբութեամբ :

Մոզալիս յուսահատած ինկաւ մօրը
մարմնոյն վրայ ու սկսաւ պագնել, լեցրնե-
լով խուցը ցաւալի աղաղակովը : Վրայիք
վաղեցին եկան, ու պէտք եղաւ անտէր
մնացած աղջիկը բռնութեամբ բաժնել մօ-
րը մարմինէն՝ որուն սրբութեամբ էր բոլոր
ուժովը. տաքին զինքը ուրիշ տուն մը ու
ամէն հարկաւոր հողը ըրին : Հերոնիմոս
ամենեին չերեցաւ. բոլոր գեղի մէջ փրն-
տուցին որ յայտնեն գլխուն եկած դժբաղ-
դութիւնը, բայց չի գտնուեցաւ, և մէկը
չէր գիտէր թէ ինչ եղեր է :

Արկրորդ օրը Վերոնիքային մարմինը
թաղուեցաւ. բոլոր գեղի բնակիչքը յու-
ղարկաւորութեան եկեր էին. Հերոնիմոսը

միայն չէր երևնար հոն : Առողալիայի աղա-
 դակը լացը օդը կը թնթացունէր , և ամէն
 սիրտ կը միրաւորէր . իր խեղճ միճակը
 մխիթարութիւն մը չէր մերցնէր . անոր
 հասակը դեռ շատ հարկաւորութիւն ու-
 նէր տառապեալ մօրը : Արեւիկից ըլլալով
 իրեն գեղացիներէն ումանք կ'ըսէին , — Ի՞նչ
 պիտի ըլլայ աս ողորմելի աղջիկը . գոնեա
 հայր մը ունենար զինքը հոգացող . բայց
 Հերոնիմոս բոլորովին թողուցեր է աս
 խեղճ զաւակը . յիրաւի՛ հիմա շատ զթու-
 թեան արժանի է . աս պզտի հասակին
 մէջ ի՞նչպէս կարող պիտի ըլլայ ճարել իր
 ուտելիքը : Ամանք ալ կ'ըսէին թէ , մենք
 մէջերնիս զինքը մեծցրնենք հասարակաց
 ծախքով , ինչուան որ տարիքը առնելով
 բանի մը ձեռք զարնէ . քանի որ մենք հա-
 ցերնիս կը գտնանք , խեղճ որբն ալ մեզի հետ
 ապրի : Երաքինութեան զօրաւոր ազդե-
 ցութիւնը , քան թէ աղջկան մատաղ հա-
 սակը կը շարժէր ամէնուն սիրտը ի զթու-
 թիւն :



ԳԼՈՒԽ Գ.

Որոյիսկիսն սէր .

Ս ԵՐՈՆԻՔԱՅԻ Թաղմանէն ութը օր
ետքը, Հերոնիմոս տուն եկաւ առջինէն ա-
ւելի դաժան . Սողալիա դիմացը վաղեց,
իր արցունքովը և սիրովը ցուցնելու թէ
ինչ ուրախութիւն իմացաւ զինքը տեսնե-
լուն . բայց հայրը ցուրտ կերպով մը ըն-
դունեցաւ զինքը : Հերոնիմոսի խիստ բնա-
ւորութիւնը իր կնկանը մահուրէն վերջը և
ւելի յայտնի կ'երևնար : Իրեն շարժուածքին,
ժանտ երեսին ու կնճռեալ ճակատին վրայ
յայտնի կ'իմացուէր, թէ կրքերը սաստիկ
կերպով մը տիրեր էին սրտին՝ որ անօրէ-
նութեանց մատնուեր՝ և սոսկալի սրտե-
րաղմներու մէջ էր :

Իր առաքինի կնկանը բարեպաշտ յոր-
դորմունքներէն օգտուելու տեղը, կ'երև-
նար որ բոլորովին սանձը թողուցեր է .
գիշերները տունէն դուրս կ'անցընէր, իր

խղճմտանքը, հաւատքը՝ խմելիքի մէջ թաթխուած էր : Առողջալիայի խեղճ վիճակը ամենեւին զինքը չէր շարժեր, որք զաւելին արցունքը ու միայնութեան ցաւագին կեանքը՝ որուն մէջ ստիպուած էր սպրիլ, անգութ հօրը աչքին չէր երևնար . ողորմելի աղջիկը անօթութենէ մեռած էր՝ թէ որ դրացիքը չօգնէին :

Հերոնիմոս օրէ օր մոլութեանց մէջ կը թաղուէր . կիրքերը ան աստիճան տիրեցին վրան, որ բոլորովին անբան անասուն մը դարձուցին զինքը . իր երջանկութիւնը անարգ կըքերը եղեր էին : Ա՛հ, ի՛նչպէս ցաւելի է ան մարդուն վիճակը, երբոր իր սիրտը՝ որ ստեղծուած է զԱստուած ու առաքինութիւնը միայն սիրելու համար, մատներ է ակտերու, և կըքերու ծառայ է եղած . որոնք մտքին դատաստանը կը ծռեն, բանականութիւնը կ'ապականեն, ամէն անկարգութիւն օրինաւոր կը ցուցնեն, ու կամայ կամայ կը փճացնեն ազնուական կարողութիւնը՝ որ իր արարիչը տուեր է ճանչնալու բարին, և ի գործ դնելու : Ան ատներ մարդս սատանայի նմանութիւն կը բերէ վրան կոր-

սընցընելով իր ճշմարիտ փառքը , ու երկնային բնութեան պատկերը արշտըկելով կ'ըսկսի միայն չարութեան փափաքիլ , ու անուլ գտնալ իր հաճոյքը . անկէ վերջը անոր կեանքը ուրիշ բանի համար չըլար , բայց եթէ զԱստուած անարգելու , երկնային ամէն շնորհք ու բարերարութիւն ուրքի տակ առնելով :

Այսպէս Հերոնիմոս բոլորովին իր ապականեալ յօժարութեանցը մատնուելով պարտքերը շատցուց . մօտի գեղէ մը գտաւ իրեն սէս անառակ մարդիկներ , որոնք իրեն ստակ փոխ տուին . իր ունեցած քիչ բարիքը՝ զոր Ա հրոնիքան իրեն աշխատանքով ու խնայութեամբ ժողվեր էր , բոլորը մխտեց : Պարտատէրները ստակներն կ'ուզէին և չէին սպասեր , մինչև ամէն ունեցածը ծախուեցաւ , ու Հերոնիմոս տունէն դուրս ձգուեցաւ . իրեն մնաց միայն իր նուազարանը , ու աղջկանը վերաբերեալ քանի մը բան , որ մեղքընալով թողուցին աղջկանը : Ղրացիներէն ոմանք զթալով խեղճ Ռոզալիայի վրայ ուզեցին քովերնին առնել . բայց Ռոզալիա մօրը մտնելու ատեն ինչպէս որ խոստացեր էր՝ խօսքը պահեց և զհայրը չթողուց :

Աս թշուառ վիճակին մէջ յայտնի ըրաւ Առողջիան թէ ինչպէս տիրած էր սրտին որդիական սէրը . հայրը յետին խեղճութեան մէջ էր , անոր համար աւելի պէտք էր շթողուլ զինքը :

Բայց Հերոնիմոսին խեղճ վիճակը ո՛ր հասաւ . անբանի մը պէս առանց մտածելու ետքի դալիքը , իր հաճոյքը միշտ կ'ուզէր կատարել : Այլ որովհետեւ զօրաւոր լաւ ձայն մը ունէր ու վարպետ կը զարնէր իր նուագարանը , միտքը դրաւ իր նուագարանովը բոլոր Արկիլիայի մէջ պտրտիլ , ու ասանկով իրեն ուտելիքը ձարել : Առւտտի ճամբայ ինկաւ իր Առողջիա աղջկանը հետ . իր խելքին փչածը միայն՝ իրեն կըջանկուծիւն սեպելով :

Աղջիկը գեղէն չհուսացած գնաց աղօթք ընելու մօրը գերեզմանին վրայ , ու հոն նորոգեց իր խոստամունքը որ ըրեր էր աս առաքինի կնիկան : Հերոնիմոս անանկ յաջողութեան հասաւ որ ամենեւին չէր յուսար , ու քիչ ատենի մէջ բաւական ստակ ժողովեց ջորի մը գնելու չափ . Առողջիա անուշ կ'երգէր հայրն ալ կ'ընկերէր իրեն . խեղճ աղջիկը իր փափուկ հասակէն վեր ,

որ հապիւ թէ տասուերկու տարեկան էր միտքը դրաւ իր հօրը աս թափառական ու անհանգիստ կեանքին ընկեր ըլլալու . առանց գանգտելու միշտ կը ջանար կրցածին չափ օգնել հօրը աշխատանքին :

Աս նոր սկսած կեանքին մէջ, Հերոնի մօտին խնայութիւնը շատ չբշեց, նորէն շուտ մը իր խմելուն և խաղալուն ետեւէն ինկաւ, ու ստակը փձացուց աղքտոցաւ ինչպէս էր առաջ . և Սողալիայէն կը հանէր միէժը աս անասնաբարոյ գաղանա միտ մարդը, անարժան ամենեւին հայր կոչուելու : Արբոր բոլորովին կը կորսնցընէր խաղի մէջ, կ'ըսկսէր չարչրկել խեղճ աղջիկը, ու հազար նեղութիւն կը բերէր գըլխուն : Իսկ ողորմելին առանց ձայն մը հանելու օրաին մէջ կը հառաչէր, ու միշտ կը կրկնէր իր սէրը :

Անարժան հայրը չէր զգար ամենեւին տեսնելով որդիական սիրոյ աս ազնիւ օրինակը : Արբոր աղջիկը կը փորձէր իր սիրովը կակոցընել հօրը սիրաւը, անի մէկէն կը մերժէր . իրեն ծանրութիւն մը կը սեպէր կերակրել աս քաղցր և հրեշտակակերպ մատաղ օրիորդը, որովհետեւ չէր

կրնար իր ամէն անկարգութիւնները համարձակ վայելել :

Յայտնի է սիրալիր Առօղալիային քաշած նեղութեան ծանրութիւնը՝ որ ուղեւոր անգութ մարդուն սիրտը շարժել, իր նեղութեանը մէջ սաստիկ կը վերաւորուէր . լայու միսթարութիւնն ալ չունէր՝ վախնալով չըլլայ թէ բարկանայ հայրը . ուստի իր վշտերը միայն Աստուծոյ դիմացը կը հանէր՝ որուն վրայ էր իր բոլոր յոյսը :

Ո՛վ մանուկ, դու որ կը կարգաս աս պատմութիւնը, շնորհակալ եղիւր Աստուծոյ, որ քեզի անխիւ ծնողք պարգևեր է . սիրէ զանոնք ինչպէս Առօղալիան կը սիրէր իր հայրը, ու պատուէ միշտ զանոնք :

Հերոնիմոս ու իր աղջիկը օր մը մէկ տեղ նստեր էին սլանդոկի մը պարտէզի մէջ՝ Քաղանա քաղաքին արուարձաններէն մէկուն մէջը, ու կը զուարճանային . միանգամայն աղէկ ստակ կը ժողվէին : Առօղալիայի քաղցր ձայնը, իրեն գեղեցկութիւնը անթիաճութեանը հետ, մեծ տպաւորութիւն բրեր էր աս քաղաքին բնակչացը վրան . ուստի քսակներուն բերանը բացուած աղէկ վառատակ կու տար ասոնց :

Ի՞նչ խեղճ բան է, կ'ըսէին ոմանք՝ տեսնելով Ռոզալիան, որ ստիպուած էր ասանկ ամէնուն դիմաց երգելու. յայտնի կ'երևնար իրենց աս աղջկան յարմարութիւնը լաւ կրթութեան, իսկ այսպէս պտրտիլը շատ չարեաց մէջ կրնար ձգելու զինքը: Այլ շատ խաթուններ յօժարութիւն կը ցուցնէին հօրմէն խնդրելու զինքը մեծցրնելու համար, բայց կը վախէին, որ շխարուին և ան արտաքին համեստութիւնը որ կը ցուցրնէր՝ կեղծ չըլլայ, անոր համար չհամարձակեցան աս բանիս:

Հերոնիմոսին ու իր աղջկանը քուլը լաւ խաղաց մը եկաւ բնակելու, ան կաքաւիչներէն մէկը՝ որ կը պտրտին քաղքէ քաղք իրենց խաղերուլը զբօսանք տալու ժողովրդեան: Այս մարդուս անունն էր Ալիկողոս, իր կնիկն ալ միատեղ ու պզտի տղայ մը որ դրեթէ Ռոզալիայի տարուօքն էր: Հերոնիմոս ու աս մարդս ճանչուօրցան մէկ տեղ ու բարեկամացան. քանի մը գաւաթ գինի պարսկէն վերջը նստան խաղի:

Ռոզալիա ու պզտի Յովակիմը սեղանէն ելան ու սկսան պարտէզը պտրտիլ: Այլ

ջիկը ծաղիկներ ժողվելու ետևէ, եղաւ փունջ
փունջ շինելով :

Հարցուց իրեն Յովակիմը թէ քանի՞
փունջ ծաղիկ պիտի կապես : — Մէկ, եր-
կու, իրեք, չորս, հինգ : — Ի՞նչ պիտի ը-
նես այսչափ բունջը — : Պէտք են, ըսաւ
Ռողալիան . Լսիկայ՝ որ շուշանով ու վար-
դով կապած է՝ սուրբ կոյս Մարիա-
մու համար է . աս մեխակը ու նարկիզը՝
իմ պաշտպան սուրբիս համար, որ է
սրբուհին Ռողալիա . աս մանուշակները
ու ճերմակ վարդերը՝ իմ խեղճ մօրս հա-
մար . իսկ աս արևածաղիկները ու կա-
կաջները՝ հօրս համար, և աս յառմիկը
քեզի համար :

— Հնորհակալ եմ, ըսաւ Յովակիմը,
երթամ մօրս ցուցնելու, բայց խնդրեմ ըսէ
ինձի, ո՞վ է ան սրբուհի կոյս Մարիամ
ըսածդ . ես աս կուսին վրայ խօսիլ ամե-
նեին չեմ ըսած ու զինքը չեմ տեսած . ո՞ր
է իրեն բնակութիւնը, ըսեմ հօրս որ եր-
թայ զինքը տեսնելու ու մէկ քանի խաղ
ձեացընելու դիմացը : Պէտք է որ շատ
հարուստ ըլլայ անիկայ, որովհետև այս-
պէս գեղեցիկ փունջ մը պատրաստիւ իս

անոր համար : Իրաւ չէ ըսածս . քեզն ինչ
պարզեւ տուեր է :

— Յովակիմ՝ ինչպէս չես դիտեր թէ ով
է սրբուհի կոյսն , ուրեմն քրիստոնէական
վարդապետութիւն չես սորված : — Չէ ,
չէ , ասանկ կոյսի մը համար՝ բան մը չին
ըսած ինձի : — Խեղճ Յովակիմ , կը ցա-
ւիմ վրադ . սրբուհի կոյսը Քրիստոսի մեր
փրկչին մայրն է . ու սկսաւ քրիստոնէա-
կան վարդապետութեան մէկ մասը՝ պզտի
տղուն մեկնել : Յովակիմ բերանը բաց մտիկ
ըրաւ , աս բաներս բոլորովին նոր էր իրեն
համար . պզտի վայրենի մարդու մը պէս
ան տարիքը հասեր էր , կատարեալ տգի-
տութեան մէջ հաւատոյ մասերուն վրայ :
Ան բաները միայն սորվեր էր , որոնցմով
իր ապրուստը կրնար ճարկու , ինչպէս իր
հայրը . առանց ըսելու ամենեւին խօսք մը
Աստուծոյ վրայօք , կամ իր յաւիտենա-
կան վիճակին , կամ արքայութեան վրայ ,
զոր առաքինութեամբ կրնայ մէկը ստանալ :
Թշուառ զաւակ :

Արքոր Առզալիա ասոնք կը պատմէր ,
ու Յովակիմ իրեն այլ և այլ հարցմունք-
ներ կ'ընէր , անդին Հերոնիմոսը ու Ափ-

կողոսը անդադար խմելու և խաղալու ետևէ էին . նախ Հերոնիմոս վաստրկելով մեծ ուրախութեամբ լցուեցաւ . բայց շուտով բաղդը ետ դարձաւ ու սկսաւ կորսնցընել : Արդ տին մէջ կատղած , աչքերէն բարկութեան կրակներ կը վառէին , ուժով կը քշեր խաղին քարերը որ աախտակին վրայ կը գլորակէին , ու երբոր կը տեսնէր որ հնարքները սլարապ կ'ելան , Մտուծոյ գէմ սոսկալի հայհոյութիւններ կը հանէր բերնէն , ըսելով թէ զես երեսէ ձգեր է : Աիկողոս կերպով մը ցաւակից կ'ըլլայ անոր , և կը զարմանար ան օրուան ունեցած քարերադդութեանը վրայ , ու բոլոր կենացը մէջ ամենէն երջանիկ օրը կը համարէր : Հերոնիմոս աչուրները դարձած այնպէս կը խաղար և գինիէն գլուխը անանկ չարաչար խռոված էր՝ որ իրեն թշնամին խարդախութեամբ քարերը մէկ գի կը ձգէր , ու ինքը չէր խմանար անոնց վերցուիլը :

Վէրպէթա Աիկողոսին կնիկը , էրկանը բով նստած խաղին ինչպէս առաջ երթալը կը դիտէր :

Հերոնիմոս նախ կորսնցուց իր ունեցած ամէն ստակը , ետքը կատղած՝ ուզելով

ձեռք ձգել բոլոր կորսնցուցած ստակը , որ
իրեն այնչափ օրուան աշխատանայ պտուղն
էր , ջորիին ու նուագարանին համար խա-
ղայ , բայց նոյնպէս կորսնցուց : Ան ատեն
իր կատաղութիւնը բոլորովին չափէ դուրս
ելաւ :

Նոյն միջոցին ներս մտաւ Առողայիւս իր
կասկած ծաղկի փունջը հօրը տալու հա-
մար . իսկ անիկա աղջիկը տեսնելով իր
բարկութիւնը հանդարտեցրնելու տեղ , ետ-
քի կատաղութեան մէջ ինկաւ . արհամար-
հեց անոր ընծան՝ որ մանկական պարզ-
մտութեամբ զուարթ երեսով՝ հօրը զուար-
ճութեան պատճառ մը տալ կ'ուզէր : Հոն
մէկէն քովը կանչեց խեղճ աղջիկը՝ արծաթ
շղթայ մը կախած էր վիզէն՝ ծայրը սուրբ
աստուածածնայ անարատ յղութեան մի-
տալը կասկած , որ իր սիրական մօրը մի
միայն յիշատակն էր մնացած քովը : Հե-
րոնխմոս քաշեց հանեց վիզէն . ինչ կու-
տաս ասոր տեղը , ըսաւ Նիկողոսին : Ան
ալ ըսաւ թէ կէս սկութմը կ'աժէ : Աղէկ ,
ուրեմն խաղանք , ըսաւ Հերոնխմոսը , և
երկու խաղէն վերջը շղթան ու միտալը Նի-
կողոսին եղաւ , որ առաւ կնկանը նետեց :

Օտարական ձայնով մը, Շնորհակալ
եմ, ըսաւ կնիկը, սրահեմ ասոնք ինչ
սէս սպտուական յիշատակ մը Պարոն
Հերոնիմոսին :

Կու ըար Ռոզալիա տեսնելով որ զրկը
ւեցաւ սիրական մօրը տուած յիշատակէն,
որ հրամայեր էր բարեպաշտ զգուշութեամբ
մը սրահելու . բայց աս անմեղին արցունք
քը հօրը կատաղութիւնը չկրցաւ հանդար
տել . որ կը մոնչէր առիւծի մը սէս : Քուլը
մատնի մը միայն մնաց որ ատենօք Վերո
նիքային տուած էր իրենց հարսանեաց օ
րը : Այլ ինչ բանի պիտի գար իրեն , որ
մատին վրայ իբրև վկայ մին էր՝ ան բարե
պաշտ կնկան գլխուն հասուցած վշտե
րուն . ուստի սէտք եղաւ անկէց ալ ազա
տիլ . շուտ մը խաղաց մատնիին վրայ ,
ու կորսնցուց . և ոսկալի հայհոյութիւն
ները աւելցան աս վերջին կորուստովը :

Հերոնիմոսին բոլոր ունեցածներէն չմնաց
ամենևին բան մը . կրակած աչքին բրե
րուն մէջ կատաղութիւնը կը վառէր : Հոն ,
կարծես անօրէնութիւն մը կը մտածէր :
Վիկտորս թէպէտ կը դողայ , բայց ի՞
բանը կը նայի , և կ'ուզէ անօրէնը թը

շուառ Հերոնիմոսին ետքի կործանումը ,
կարծելով որ դեռ ստակ պահեր է քո-
վը . և չէր կշտանար՝ ինչուան որ ան
կարծած ստակներն ալ քովէն չյափրշ-
տակէր :



ԳԼՈՒԽ Դ

Անողորմ հայր մը .

ՆԵՆԳԱՒՈՐ խորամանկ Աիկողար
խելքը զլուխը պահեր էր զզուշանալով շատ
խմելէն , որպէս զի աղէկ մը որողայթի
մէջ ձգէ իր հակառակորդը . շիշ մը հին
դինի բերել տուաւ ու լեցուն դաւաթը
հերոնխմասին երկնցնելով , ըսաւ . Ահա կը
տեսնեմ բարեկամ , որ այսօր մեծ դժբաղ-
դուծիւն ունեցար . բայց անտարակոյս ու-
րիշ ատեն կորուսող կը հանես : Այսպէս
շատ անգամ ինձի ալ հանդիպիր է , որ մը
կորսնցուցի՝ երկրորդ օրը բոլորը հորէն
վատարկեցայ : Աւստի սիրտդ չկտարի , կար-
ծես թէ երբեմն բաղդը զմեզ կը մատնէ ,
որպէս զի ետքը բոլորովին յաջողէ . թէ որ
քանի մը ստակ մնացեր է քովդ , անով
խաղանք բոլոր կորսնցուցածիդ դէմ :

— Զկայ , չկայ և ոչ ստակ մը պտտայ

Հերոնիմոս առիւծի սէս մօնչելով, կոր-
ծանեցայ առանց կազնուելու՝ փճացայ
բոլորովին :

Խեղճ Առզալիան կու ըար դառնու-
թեամբ իմանալով որ հայրը ունեցածը
չունեցածը կորսնցուցեր է . իսկ հայրը
ամենեւին ուշ չէր դնէր անոր արցունքնե-
րուն , ձեռքի գաւաթը մէկէն պարպեց ու
ակռաներովը կտոր կտոր ըրաւ . ելաւ սե-
ղանէն ու գնաց սլարտէզը սլտրտելու՝
կատղած դազանի մը սէս :

Յած ձայնով մը ըսաւ Վ երպեթա իր
էրկանը . — Այլու՝ Աիկողոս , մէկ բան մըն
ալ փորձենք . աս սլզտի աղջիկը Առզա-
լիան՝ աղէկ ձայն մը ունի , վառվո ուն ու
գեղեցիկ է , կրնաս աս մարդէն ծախու
առնել ինձի համար : Աիկողոս ընկղմած
յաջողութեան և գինեոյ գուարթութեան
մէջ , չիմացաւ որ կնկանը խորհուրդը չա-
փէ դուրս անիրաւ էր . շուտ մը ելաւ գնաց
ան տեղը՝ ուր Հերոնիմոս կատաղութիւնը
կը թափէր հառաչանքներով ու հայհոյու-
թեամբ : — Ա՛հ , բարեկամ , ըսաւ՝ մօտե-
նալով իրեն . դու ինչո՞ւ մէկէն կը յու-
սահատիս այսպէս . անմտութիւն չէ՞ , չես

Ճանչնար թէ ինչ է աշխարհքս , և ի՞նչպէս
կը դառնայ ամէն բան : Այսէ քու հա-
սակիր , քու գեղեցիկ ձայնիդ , և երաժրշ-
տութեան մէջ ունեցած վարպետութեանդ .
քեզի ի՞նչ է կորսուած . ինչո՞ւ ասանկ շփո-
թեր ես : Այլու մտիկ ըրէ , քեզի խորհուրդ
մը կ'ուզեմ տալու , որ քու բանիդ շատ յար-
մար կու գայ . ես քու բարիքդ կ'ուզեմ ,
ամենեկին չտարակուսիս աս բանիս վրայ :
Դու կնիկ չունիս , աս պզտի աղջիկդ ալ
քեզի մեծ հոգ և արգելք մըն է . որովհե-
տե գեղեցիկ է՝ օր մը իրեն բազդը գտնե-
լով գքեզ կը թողու կ'երթայ : Այլու ինձի
տուր , ես իրեն հօր տեղ կ'ըլլամ , հոգ
կ'ընեմ վրան . կնիկս ալ կը սիրէ զինքը ,
ու ազնուական քաղաքաւար աղջկան մը
պէս սիրով կը նայի , և աղէկ կը մեծցընէ
զինքը . դու ալ ամէն մտմտութէ կ'աղա-
տիս : — Չէ , չէ , չեմ խտար . աշխարհ-
քիս մէջ ուրիշ բան չունիմ հիմա բաց ի
անկէց . դու զիս ամէն բանէն զրկեցիր :
— Աղէկ՝ մտածէ քեզի տուած խորհուրդիս
որ օր մը չզղջաս մտիկ չընելուդ համար :
Հերմանիմոս կայծակէ զարնուած մար-
դու մը պէս պաղած մնաց . մտածեց ,

մտածեց, մանաւանդ թէ ամենեւին չմտա-
 ծեց, որովհետեւ բոլոր սիրտը կրքերը բռ-
 ներ էին. — Սիկողոս, իրաւունք ունի,
 ըստ ինք իրեն, ի՞նչ պիտի ընեմ աս պզտի
 աղջիկը. ինձի համար ալ պառկելու տեղ
 մը չունիմ. թող որ մինակ գտնուած ա-
 տենս՝ կրնամ աղէկ առաջ տանիլ իմ բա-
 ներս: Ատրամանկը քովէն չէր զատուէր,
 վագրի նման անոր որսին հտուէն էր:
 — Ի՞նչ կու տաս ինձի՞ Սիկողոս, ըստ
 կտրած ձայնով մը: Ա՛հ, ի՞նչ կրնայ
 աժել ան պզտի աղջիկը, երկայն ատեն
 ինձի ծանրութիւն պիտի ըլլայ. շատ շատ
 աժէ վննետիկեան ոսկի մը. ահա քեզի,
 ըստ, ցրցուց փայլուն ոսկի մը: — Օ՜հոր
 կ'ընես զիս, մէկ ոսկի մը. . ինձի նայէ.
 տուր իրեք ոսկի՝ ջորիս և նուագարանս,
 ու Առզալիան քեզի ըլլայ: — Հատ է
 շատ բարեկամ. . բայց քեզի ցուցընելու
 համար որ զքեզ կը սիրեմ, ու քեզի պէս
 պատուական մարդուն երջանկութիւնը
 կ'ուզեմ. ահա տամ քու ուզածներդ:

Այսպէս Առզալիան ծախուեցաւ երեք
 ոսկիով՝ անարգ անասունով մը՝ ու մէկ
 նուագարանով:

Արքոր խնացուցին իրենն՝ թէ ասկէց
վերջը՝ Ախկողոսին հետ պիտի ըլլայ, խեղճ
աղջիկը ողբալի ձայն մը ձգեց և սկսաւ
լալ, ինկաւ հօրը ոտքը կ'աղաչէր կը պա-
ղատէր որ չթողու զինքը: Բայց աս դա-
ժան և անգութ մարդը խստութեամբ մը
սլատասխան տուաւ. ինչո՞ւ այդպէս կու
լաս խենդ աղջիկ, գնա՛ Ախկողոսին քով,
իրեն հետ աւելի երջանիկ կ'ըլլաս քան
իմ հետս. հոն աղէկ ուտելիքդ կը դըրու-
նաս. քու նոր հայրդ ինձմէ հարուստ
է: Առանց ուշ գնելու անոր խեղճ լա-
ցին, ու առանց սրագտուելու, ելաւ պար-
տեղէն, առաւ իր նուագարանը ու ջորին՝
և գնաց:

Ռոզալիան ողբալի ձայնովը թնդացուց
օդը, և կու լար իր անարժան հօրը հեռա-
նալը՝ առանց մէկ մխիթարական խօսք մը
ըսելու: — Հայր, հայր իմ, կը պոռար
հեռուէն՝ որ չէր լսուէր, կը թողուս այս-
պէս քու զաւակդ. առանց քեզի ինչ պիտի
ըլլայ իմ խեղճ վիճակս:

Բայց պղնձէ աղիք անգութ մարդը՝
ող չերեցաւ, ու Ռոզալիան մնաց մինակ
ի Ախկողոսին և Վերսեթային քովը, որոնք

ընդունայն կ'աշխատէին հանդարտեցընել
զինքը : Աիկողոս տուաւ իրեն շղթան ու
մատնին . բայց աղջիկը չէր դադարի հայրը
կանչելէն :

Խաղարկութիւնէն վերջը՝ շուտ մը ելաւ
Աիկողոս պանդոկէն . Առզալիան ալ ստի-
պուեցաւ հետը երթալու : Ճամբան սա-
տահեցան Հերոնիմոսին որ ջորիին վրայ
հեծած կ'երթար . Առզալիան ձեռքերը եր-
կրնցուց դէսլ ի հօրը՝ ու սկսաւ կանչել որ
ողորմի իրեն . բայց անգութը դարձուց ե-
րեսը շտենելու համար իր զաւակը , ու
անցաւ գնաց՝ որպէս թէ չէր ճանչնար
զան ամենեւին : Այս պէս սղատելով
աղջիկէն , որ իրեն բն մը կը սեպէր ,
սկսաւ բարբարական և անառակ կեանք
մը անցնել , չունենալով արգելք մը իր ան-
կարգութիւններուն :

Իսկ Առզալիա թշուառ կեանքի մը հա-
սաւ , և այնչափ կը ծանրանար իրեն , որ-
չափ կ'իմանար չարութիւնը ան անկարգ
մարդիկներուն՝ որոնց ծախսեց զինքը իր հայ-
րը : Ասոնք կը ջանային խօստամունքներով
վաստրիկի Առզալիայի սիրտը , ու ծածուկ
սորվեցընել իրենց արհեստը , ու գողութիւն

վարժեցնել : Բայց աղջիկը մերժեց իրմէն
ասանկ անօրէն գործքերը , ու յանդիմա-
նեց անոնց անկարգ վարմունքը , մինչև շատ
անգամ դաւազանով ծեծ կերաւ անոնցմէ՝
ու կերպ կերպ նեղութիւններ քաշեց : Անեղձ
աղջիկը գովելի հաստատութեամբ ու համ-
բերութեամբ տարաւ աս ամէն վշտերուն ,
ու երկար ատեն հանդարտեցուց իր անարգ
հակառակորդները : Ախիողոս բաւական
սեպեց իրեն՝ Աողալիայի վաստակը որ տու-
ներու դիմացը երգելով կ'առնուր . կը յու-
սար որ ժամանակը ու իրենց տուած ան-
կարգ կրթութիւնը և չար օրինակը , կամաց
կամաց կը խոնարհեցնեն : Աողալիան ի-
րենց նմանելու :

Իսկ աս ժշուառ աղջիկան նեղութիւնը
կ'աւելցնէր բոլորովին զրկուիլը կրօնքի օգ-
նութենէ . բաղդ ունեցեր էր որ մօրը մահ-
ւրնէ քանի մը ամիս առաջ՝ իր առջի սրբ-
բութիւնը առած էր , ու խոստացեր էր Աս-
տուծոյ չժողուլ ամենևին առաքինութեան
ճամբան : Աստուած ընդունելով անոր
անմեղ սրտին ուխտը , նոր ուժ մը տուեր էր
համբերելու այնչափ ծանր վշտաց : Աս-
ծուկ իր աղօթքը կ'ընէր , գիշերուան լռու-

Թեան ատեն՝ իր սիրտը կը բանար Աստու-
ծոյ դիմացը, ու կը յայտնէր քաշած նեղու-
թիւնները: Հաստատուն առաքինութիւն
մը պէտք էր գէժ դնելու այնչափ անկարգ
զրգիւններու և չար օրինակներու: Աւստի
Աստուած՝ որ չԹողուր իրբէք որոնք որ
հաւատարմութեամբ կ'ուզէն սպահել իրեն
օրէնքները, իր սաշտսպանողական թեխն
տակը ծածկեց զինքը ու սպահեց ամէն կող-
մէն լարուած որոգայթներէն. իրեն հօօր
բազուկը զօրացուց աս մատաղ օրիորդը,
որ հաստատուն մնաց աստուածահաճոյ
առաքինութեանը մէջ:

Ռողալիան շատ տկարացաւ. գլխուն
եկած այնչափ լիւտերէն, շատ անգամ փոր-
ձեց փախչիլ ազատիլ աս հալածանքէն,
բայց իր անգութ գերեւթարները այնպէս
զգուշութիւն կ'ընէին վրան՝ որ անկարելի
եղաւ առաջ տանիլ իր խորհուրդը: Աւստի
իր յոյսը բոլոր Աստուծոյ վրայ դրաւ, ու
իրմէ միայն օգնութիւն կը խնդրէր, երբոր
մարդիկ զինքը թողուցին: Իրեն ծանր նե-
ղութեան ժամանակը՝ կը յիշէր մօրը խրա-
տները որ մեռնելու ատենը տուած էր իրեն,
ու սիրտ կառնէր: ()րէ օր այնչափ ուժը

կտրեցաւ որ ալ չէր կրնար քաշել, քաշ-
կըրտուելով կ'երթար ան մարդկանց ե-
տեւէն՝ որոնք խիստ բռնացեր էին վրան,
ու կը ջանային որ նաև մեղաց լուծին տա-
կը ձգեն զինքը. երթալով այնչափ տկա-
րացաւ, որ կը վախցուէր թէ հիւրնանա-
լով անկողին լինայ :

Երիկուն մը աս խաղարկուաց խումբը
բերդի մը մօտ հասան. «Նիկողոս՝ ըսելով
թէ կ'երթայ քանի մը բան գնելու մօտի
գեղէն, թողուց իբ կնիկը, Առդալեան ու
Յովակիմը, տեղմը ցուցնելով անոնց որ
հոն իրեն սպասեն. իրենք ալ խոստացան
ըսածին պէս ընելու :

Այն մ'ալ կէս գիշերուն եկաւ, կանակը
շաղկաժ ահագին սպատառ մը. ու ամէնքը
մէկէն ճամբայ կան : «Նիկողոս տարաւ ա-
նոնք անկոխ ճամբէ մը թանձր անտառի մը
մէջ. հազիւ թէ քանի մը քայլ առաջ գա-
ցեր էին, լսեցին որ իրենց ետեւէն շուն մը
կը հաչէ. կանկ առաւ «Նիկողոս՝ ականջ
գրաւ, ու հրացանի ձայն լսելով կարծեց
թէ ետեւէն ինկեր են իրեն հասնելու. ցած
ձայնով մը ըսաւ կնկանը, ետեներնէս
մարդ կու գայ՝ փախչինք, ապա թէ ոչ
բաներնիս գէշ է :

Բայց ի՛նչ ընենք աս հիւանդ աղջիկը , տես չկրնար մեր հտեւէն դալ . թէ որ թողունք , կը մատնէ զմեզ , ու մեր կեանքը դատաւորի ձեռք կ'իյնայ :

Դարձաւ 'Աիկողոս Առդալիային ու բռնցի կը հրէր որ վաղէ՛ առաջ անցնի : Խեղճ աղջիկը ամէն ուժը թափեց ու չկրցաւ փախչողներուն հտեւէն հասնիլ . 'Աիկողոս կատղած որ եւելի չկրնար վազըննել , սկսաւ քաշքշելով տանիլ . բայց Առդալիայի ծնկուրները թուլնալով հողնածուծենէն ինկաւ ողորմելին : Ան ատեն հրայանի ձայն մին ալ լսուեցաւ մտէն . ազատէ զքեզ ըսաւ 'Աիկողոս կնկանը , ու թո՛ղ ատ անիւ ծած ողորմելի աղջիկը . և ինքը դառնալով Առդալիային քայլ , տեսաւ որ անոր վրայ առաջ երթալու ուժ չկայ , ձգեց ողորմելին խորունկ փոսի մը մէջ , և ինքը վազելով զնայ կնկանը ու որդւոյն հտեւէն : Աւ որ պէս զի փախչելուն արդելք մը չըլլայ , գողցած պատասան ալ ձգեց ուրիշ փոսի մը մէջ . և այսպէս ազատեցաւ իր հտեւէն ինկողներէն , որոնք կ'ուզէին զինքը բռնել :

ԳԼՈՒԽ Ե

Վասնքի մը դուռ .

ՈՒՋԱԿԱՒԱ փոսին մէջ իյնալով ինքքը զինքը կորսնցուց , ու այնպէս անցուց գիշերուան մէկ մասը : Արբոր խելքը գլուխը եկաւ , սկսաւ շորս դին նայիլ ան սոսկալի յճին մէջ , առանց գիտնալու թէ ուր է , ինչ եղեր է իրեն . և կսաւ կանչել որ օգնութեան հասնին , բայց չգանուեցաւ մարդ որ իրեն օգնէ :

Առաւօտեան լոյսը ծագելու առին սկըտաւ աշխատիլ որ դուրս ելէ , և հազիւ կրցաւ սոսկալի ժայռերու մէջէն անցնելով սղաթի ճամբու մը վրայ ելլալ : Հոն մինակուկ , անօգնական , ուժէ ինկած , գլուխը միրաւորուած , ահով դողով նստաւ քարի մը վրայ . միտքը առ Աստուած դարձուց և խեղճ միճակին վրայ կը մտածէր :

Հանկարծ անտառի տերեւներուն մէջէն շնկոց մը ըսեց , ու բոլոր մարմինը սկսաւ

դողդողալ, վախնալով որ գաղան մը կամ
Նիկողոսին մարդիկներէն մէկը վրան կը
վազէ : Բայց իր շիտթութիւնը հանդար-
տեցաւ, տեսնելով որ մարդ մը ձեռքը որ-
սորդի գործիքներ առած դէպ ի իւր կողմը
կու գայ : Հարցուց իրեն աս մարդս զար-
մանալով թէ ի՞նչ կ'ընէ հոն, ի՞նչպէս
եկեր է, և մըջափ ժամանակ է որ աս
ամայի տեղը կեցեր է :

Ռողալիս ազնուական քաղցրութեամբ
մը յայտնեց անոր խեղճ վիճակը, մարդը
շարժեց գլուխը, ու երկար հարցմունքներ
ըրաւ՝ որ գուցէ առջի ըսածին հակառակ
բան մը լսէ բերնէն ու իմանայ շիտակը :
Բայց վերջապէս ստուգելով որ իրաւ կը
խօսի, մեղքըցաւ վրան բռնեց թեւէն ու
տարաւ կանանց վանք մը որ հոն մօտիկ
էր, և արբասուհին կանչեց խօսակցու-
թեան սենեակը, որ ցուցունէ անոր իր
գտած աղջիկը :

Մտօթխածութիւնը՝ որ սպարկեշտ աղ-
ջկանը խօսքերուն ու շարժմունքին մէջ որոշ
դուրս կը ցաթկէր, շարժեց ազնիւ արբա-
սուհիին սիրտը, առաւ ներս աս անտէր
պանդուխտը, մտցուց հիւանդանոցը, ու

Հիւանդապահ հոսանաց յանձնեց որ հագան : Ինեղձ աղջիկը կարօտ էր հանդըստեան մանաւանդ մխիթարութեան . և բոլորն ալ գտաւ աս աստուածաբաշտութեան ու առաքինութեան բնակարանին մէջ : Տասնհինգ օր չկրցաւ անկողինէն ելլել . և աս միջոցիս յայտնի երեւցաւ իր սրտին աղնուութիւնը , որով սիրելի եղաւ բոլոր կուսանաց : Ինքն ալ շատ բարի օրինակներ առաւ՝ տեսնելով ճշմարիտ խաղաղութիւնը , երջանկութիւնը ու հաստատուն և գեղեցիկ աստուածաբաշտութիւնը՝ որ աս բնակարանիս մէջ կը տիրէր : Ո՛հ , երջանիկ էր՝ թէ որ կարենար հոն մնալ , ու Աստուծոյ տանը մէջ հրեշտակական կեանքը անցունել զոր սրտանց և եռանդեամբ կը սիրէր :

Ի՞նչ երջանկութիւն պիտի ըլլար , թէ որ բոլորովին յափշտակուէր իր միտքը ան մենաստանին մէջ տաղաւարած առաքինութեան քաղցրութենէն , և կարենար Քրիստոսի բոլորանուէր հարս բնծայել ինքը զինքը , ու զօհել իր սիրտը անսր սիրոյն՝ որ կ'ուզէ բնակիլ մարդկան հետ : Բայց չհամարձակեցաւ այսպիսի գերազանց միճակի մը ձեռք զարնել , անբաւական սե-

պելով զինքը և անարժան : Սիրտը կը
վկայէր թէ կարող պիտի ըլլայ հոն աղէկ
ծառայութիւն մը ընել Աստուծոյ բոլոր
սրտովը . բայց իր մանկական հասակը
արդեւ կ'ըլլար այսպիսի մտածմունք մը
վստահութեամբ յանձն առնելու . ուս-
տի որոշեց հանելու մտքէն աս փափա-
քը :

Ռողալիա երբ առողջացաւ և ուժը տեղը
եկաւ . ժամէ ժամ կ'ըստպասէր որ զինքը
վանքէն դուրս հանեն : Օր մը արբասու-
հին եկաւ իր հետը տեսնուելու . Ռողալիա
անոր անուշ խօսքերէն շարժելով, և իր սրը
տին ազգմանը հնազանդելով, ինկաւ աս
կոյս մօրը ոտքը ու աղաչեց որ պահէ զին-
քը վանքին մէջ, խոտտանալով կրցածին
չափ աշխատելու, և հարկաւոր անձ մը
ըլլալու բոլոր ընկերութեան . դասը երգե-
լով և իրեն վերաբերեալ ամէն բան կատա-
րելով, որով կը յուսար գոհ ընել արբա-
սուհին :

Աւ որովհետեւ աղէկ ճանչցեր էին զին-
քը, միանգամայն կը վախնային՝ չըլլայ թէ
նորէն ճամբայ դնելով նոր վտանդի մէջ
ձգեն խեղճը, անոր համար դիւրութեամբ ըն-

դունելի եղաւ իր խնդիրը: Հապուցին իրենց
կրօնքին զգեստը, և վանքին ներսի կող-
մերը խուց մը տուին. իրենց հետ սեղանի
կը նստեցնէին ու ամէն կերպով խնամք կը
տանէին՝ որ հանգիստ և ուրախ ըլլայ:

Ռողալիա մեծ երջանկութեան հասաւ,
տեսնելով զինքը Աստուծոյ ջերմեռանդ
ճառայից բնակութեանը մէջ՝ ուր ամէնքը
իրեն մը հոգ ունէին. կուսանքն ալ շատ
բարի օրինակ կ'առնէին իրեն առաքինի
վարմունքէն: Իրաւցրնէ գերազանց էր ի-
րեն մը փայլած ամօթխածութիւնը և
համեստութիւնը. նմանապէս զարմանալի
էր աստուածսլաշտութեան հետ պատրաստ
հնազանդութիւնը՝ որ Ռողալիան ամէն
առթի մէջ իր վրան կը ցուցնէր:

Ինեղձ ազջկան ցաւոց ու փորձութեան
օրերը բոլորովին անցան, ու նոր կեանք
մը կը վարէր առաքինի կուսանաց մէջ՝ ո-
րոնք ամէն սէր կը ցուցնէին վրան: Այս ու-
րովհետև ինքը դեռ բուական կրթութիւն
առած չէր, կուսանք սորվեցուցին՝ իր
հասակին պատշաճ ամէն հարկաւոր կրթ-
թութիւնները. ու աս հըռ աշկերտը իրեն
դաստիարակներուն ջանքին յարմար ու-

շագրութեամբ՝ քիչ ատենի մէջ այնչափ
յառաջացաւ որ չէին յուսար :

Աբրասուհին , տեսնելով Առզալիային
առաքինասէր փոյթը , կ'ըզմայէր և մայ-
րական սիրով մը կը գուրգուրար վրան ,
ու ամէն ջանքը ի գործ կը դնէր՝ որ իրեն
որդեգրեալ աղջկանը միտքը սլայծառացնէ
ամենայն առաքինութեամբ : Աւելի դիւրին
կերպով մը և մեծագոյն փութով հոգ ու-
նենայու համար՝ աս փափուկ ծաղկին վրայ ,
իր բնակարանին մօտ խուց մը տուաւ ի-
րեն , ու շատ անգամ ժամերով կենակից
և խօսակից կ'ըլլար հետը : Օր մը ըսաւ
իր կուսանացը թէ՛ վարդ մը կը սնուցա-
նեմ մեր տանը համար , ու հրեշտակ մը՝
երկնքի համար . աս աղջիկը օր մը մեզի
փառք պիտի ըլլայ , Աստուծոյ խնամքը
կ'առաջնորդէ իրեն առաքինութեանց ծայ-
րը հասնելու :

Աս գուշակութիւնը օր է օր կ'ստու-
գուէր . վասն զի քանի որ կը մեծնար
Առզալիա , այնչափ առաջ կ'երթար խնա-
տութեան ու աստուածաբաշտութեան մէջ .
շատ անգամ տեսան զինքը որ աղքատիկ
խուցին մէջ խաչին ոտքը ինկած , քաղցր

արցունքներ թափելով շնորհակալ կ'ըլար
Աստուծոյ, որ աս շնորհքը ըսաւ իրեն և
հրեշտակային աս բնակարանը բերաւ : Ար-
քայութեան մէջ կը կարծէր զինքը, ու չի-
տէր ինչպէս օրհնէ զԱստուած իրեն ան-
բաւ բարերարութեանցը համար :

Տայց աս երջանկութեան մէջ՝ սրտհատ-
նում մտմտութ մը կը խայթէր միտքը, քա-
նի որ կը մտածէր իր թշուառ հայրը :
Արդեօք ինչ եղեր է հօրս, կ'ըսէր երբեմն
ինքնիրէն . կողիւս ո՞ր կողմը կը քալէ . ինչ
կ'ընէ, երջանիկ է, չէ՞նէ իր կրքերուն գերի
եղած թշուառութեամբ կ'ապրի : Միայրը
կուգար մօրը խօսքերը որ մեանելու ատեն
ըլլով պատուիրեր էր իրեն չթողուլ ամե-
նեին իր հայրը . ու խիղճը կը խայթէր
զսիրտը՝ թէ ինչպէս չարահեց մօրը խրատը .
ու շատ անգամ իրեն փորձութիւն կուգար
վանքէն փախչիլ, և կողիւն մէջը պտըտի-
լով փնտռել թշուառ Հերոնիմոսը :

Աբբասուհին որ երկար ատենէ ի վեր
կը տեսնար խեղճ Աողալիային վրայ նեղու-
թիւն մը՝ որ կը հալէր կը մաշէր զինքը .
օր մը հարցուց սլատձատը . առաքինի
աղջիկը սիրտը բացաւ անոր և սլատմեց
ճշմարտութեամբ : Ան ատեն ազնիւ փա-

նամայրը խրատելով զինքը, ըսաւ . —
 Այտք է հանդարտիս աս բանիս փոյ-
 ղք, վասնզի հայրդ ծախելով զքեզ հրա-
 ժարեր է քեզմէ, և յանդուզն անխոհե-
 մութիւն է քու աս հասակիդ մէջ, այս-
 ինքն տասնըջինգ տարուան աղջիկ մը
 մինակ դուրս ձգես զքեզ, և քաղքէ քա-
 ղաք սլաղաթիս հայրդ դտնելու համար, ա-
 նանկ հայր մը որ անգութ բարբարոսու-
 թեամբ ձգեր է իր զաւակը :

Սողալիային խելքը վկայեց որ արբա-
 սուհին իրաւունք ունի . ուստի գնաց սուրբ
 սեղանին գիմացը աղաչեց Մատուծոյ բոլոր
 սրտանոց՝ մեղաւոր հօրը դարձին և փրկու-
 թեանը համար : Մտով սիրտը քիչ մը հան-
 դարտեցաւ, և սկսաւ նոր եռանդեամբ մը
 իր առաքինութեան ու կրթութեան մէջ
 առաջ երթալ . փափաքելով միանդամայն
 Մատուծոյ նուիրել զինքը՝ ու աշխարհքէս
 հրաժարիլ : Բայց աս նուիրման օրը դեռ
 չէր հասած . այէտք էր որ նախ անյնի
 նոր փորձութեանց բովէն, որպէս զի ա-
 լիկ արժանաւոր և հաճոյ ըլլայ ան զև-
 ըրադոյն սրբութեան՝ որուն գիմացը մտրդ-
 կային առաքինութիւնները ոչինչ են :

Օր մը արքայապետ Տիմոն այցելութեան եկաւ իր եղբայրը Տոն Անտոն Արիստոքի կոմս, սպանիայի թագաւորին քով հաղարաստ, որուն հրամանին տակն էր անտոնը Արիստոք կղզին : Աս ազնուական պարոնը որ շատ տարիէ ի վեր շէր տեսած զարքայապետ Տիմոն, իրեն հետք առած էր իր ամուսինը Արիստոքին որ Փորթուկալցի ազնուական ցեղէ մըն էր, և մէկ հատիկ աղջիկը Արիստոքի, որ գրեթէ Առողալիայի տարեկից էր : Ասոնք կը բնակէին վանքին քովը տան մը մէջ. ամէն փոյթ եղած էր՝ որ հաճոյ և զուարճալի ըլլայ իրենց աս բնակարանը :

Առողալիա մէկէն ճանչցուեցաւ աս ազնուական ընտանեաց . փանն զի արքայապետ Տիմոն գովութիւնը Առողալիային բնաւորութեանը վրայ, շարժեց զկոմսոսին և փափաք մը վառեցաւ սիրտը շուտով տեսնելու զանի . ուստի ստիպուեցաւ աղջիկը երթալու անոնց : Խաթունը ուզեց իր բերնէն լսել զկոմսոն եկած գէտքերը . Առողալիա այնպէս զգուշութեամբ պատմեց զկոմսոն անցած փորձանքները, ու այնպիսի ամօթխածութեամբ մը իր քաշած իշտերը, որ

կոմսուհոյն սիրտը շարժեցաւ , և սկսաւ լալ : Ազատ օրիորդին բերնէն դառն խօսք մը շեղաւ հօրը վրայ , որ բոլոր շարեաց պատճառն էր , այլ մանուսանդ նայեցաւ ծածկել՝ անոր ամէն մոլորութիւնը և յանցանքը անկրթութեան տալով : Արբոր դուրս ելաւ Առօղալիա , կոմսուհին ըսաւ էրկանը . — Առօղալիան հրեշտակ մննէ , շատ դժուար բան է որ այսչափ խելք այտալիսի գերազանց անմեղութեան հետ միանայ , և աս աստիճան խոնարհութիւն՝ գերազանց վեհանձնութեան հետ :

Վ իկտորիա աղջիկն ալ եւելօք յարուցաւ Առօղալիային , ու աղաչեց հօրքրօջը որ թողու Առօղալիան ամէն օր ելելու վանքէն՝ ու քանի մը ժամ իր հետը կենակցելու . արբատուհին ալ շնորհեց իրեն աս խնդիրքը : Շուտ մը սաստիկ բարեկամութեամբ կապուեցան իրարու հետ՝ աս երկու հասակակից աղջիկները . որպէս թէ բոլոր կեանքերնուն մէջ ճանչցած ըլլային մէկգմէկ :

Վ իկտորիա բնութեամբ վառվռուն էր ու աշխոյժ , միանգամայն զուարթ ու ծաղրածու . իսկ Առօղալիա հանդարտ բնաւորութեամբ , ծանր ու խոհեմ . բայց շա-

փոյլ : Իրեն քաշած վշտերը , ան մատաղ
հասակին վրայ խոհեմութիւն մը տուեր
էին . ամէն մէկ խօսքը կը քննէր , և մէկ
բանը չըրած՝ առաջ կը մտածէր . իրեն բա-
րեկամին պէս՝ չէր թողուր ինքզինքը ե-
րևակայութեան ուժովը շարժիլ :

Աս երկուքը թէպէտև տարբեր բնաւո-
րութիւն ունէին , բայց այնպէս յարմարե-
ցան մէկմէկու՝ որ կարծես թէ մէկ մօր
զակերներ էին : Միատեղ կ'երգէին , կ'ու-
րախանային , ժամերով կը պտըտէին , ու
անմեղութեամբ կը զուարճանային . և կար-
ծես թէ եւէի կը վառէր անոնց սիրտը վան-
քին և տեղոյն գեղեցիկ դիրքն ալ՝ որ կա-
նաչաղեղ բլուրի մը վրայ էր՝ ծովէն քիչ
մը հեռու :

Ամսը և իր խաթունը մեծ երջանկու-
թեան մէջ էին , տեսնելով աս անմեղ բա-
րեկամութեան կապը իրենց սիրելի աղջկանը
ու առաքինի Առողայիային մէջ : Աշրկար ա-
տենէ ի վեր աս ազնուական ընտանիքը կը
փափաքէին Վիկտորիայի ըստ կենակից մը
զտնելու . բայց չկրնալով հաստատ հաւա-
նութիւն տալ աղջկան մը ընտրութեան
վրայ , կ'սպասէին որ Աստուած իրենց

սլատրաստէ մէկը : Այս ահա Առողայիան
կ'երենար՝ իրենց վաւիաքած աղէկ բնաւո-
րութիւնները ունենալ . ուստի միաբան
խնդրեցին առաջնորդէն : Իսկ արքատու-
հին որ եւելօք կը սիրէր աս որք աղջիկը ,
շատ դժուարութեամբ հաւանեցաւ իրենց
խնդրոյն . և չուզելով մերժել եղբօրը ա-
ղաչանքը , առաջարկեց Առողայիային աս
բանս :

Անմեղ աղջկանը սիրտը շատ ցաւեցաւ ,
տեսնելով որ սլիտի թողու անանկ տուն
մը , ուր այնչափ շիտթութիւններէ ու նե-
ղութիւններէ վերջը՝ հազիւ իր երջանկու-
թիւնը գտնուէր . բայց որովհետեւ բոլորո-
վին հրաժարած էր իր կամքէն , ու զինքը
յանձնած էր հնազանդելու անոր հրամա-
նացը՝ որ ան ատենը մօր պէս ճշմարիտ սի-
րով կը սիրեր զինքը , ուստի հաւանեցաւ
երթալու կոմսին ու իր զուարթ ընկերին
հետ . բայց նախ հրամանն առաւ որ ամէն
տարի այց ելլէ ան սիրելի ընկերութեանը . և
կոմսը սիրով հաճեցաւ , որովհետեւ ինքն
ալ կ'ուզէր ստէսլ տեսնել իր քոյրը :

Արքատուն կուսանաց իր վերջի բարեւր
տալու ատենը՝ սկսաւ լալ Առողայիա .

Նմանապէս սլատուական արքայուհիէն
բաժնուելու ժամանակ, որ այնչափ ատեն
սիրով ընդունել էր զինքը: Չիյտեր ինչ
կերպով շնորհակալ ըլլայ, և ցուցնէ իր
երախտագիտութիւնը անոնց ըրած բարիք-
ներուն համար. խոստացաւ չմոռնալ ա-
մենեին աս ազնուական բարիբարները:



ԳԼՈՒԽ Զ

Դժբաղդ պատահար .

ԼԻՐԿԱՐ ատեն տխրութեան մէջ էր Ռոզալիան վանքէն հեռանալուն վրայ . շատ նեղութիւն քաշեց մինչև վարժեցաւ աշխարհական զբաղմունքներով լցուած նոր կեանքի մը : Ա իկտորիա կը մտխիթարէր զինքը , ու հանդարտեցրնել կը ջանար . կով սը ու խաթունը իրենց աղջկանը պէս կը հողային , ու Ա իկտորիա իր քրոջը պէս կը սիրէր զինքը :

Իբրաւցրնէ շատ զարմանալու բան էր , որ աղքատ ձկնորսի մը աղջիկ՝ ասանկ վառաւոր պարոնի մը տուն առնուի , և ազնուական ընտանեաց ամէն բարիքը վայելէ . ու այնչափ խնամոց և սիրոյ մէջ՝ անանկ զգաստ և գեղեցիկ վարմունք մը ունենայ , որ ամէնուն սիրտը վաստկի , և ուղինան իրեն հատուցում մը ընել : Ռոզա-

լիա երբեմն կը կարմրէր ամչնալէն , երբոր
միաբը կը բերէր իր ցեղը , իր աղքատու-
թիւնը , իր անցած մշտերը , և հիմակուան
բարիքը որ կը վայելէր . ան ատեն իր խո-
նարհ հեղութեամբը ինքզինքը անարժան
կը սեպէր այնպիսի երջանիկ կենաց՝ լիովի
առատութեան , խաղաղութեան և զուար-
ճութեան մէջ : Գոլորովին տարբեր ան
աշխարհասէր աղջիկներէն , սրոնք բարե-
բաղլութեան մը հանդիպելով կը մոռնան
ողորմելի միճակնին սրուն մէջը ծնած են .
ու գերի կ'ըլլան կրից և ընդունայն հա-
ճոյից :

Առողալիա՝ կրցաւ ազատ սպահել իր սիրտը
ան մտանգաւոր որոգայթէն զոր մեծու-
թիւնը կը բարէ ընդդէմ սլաքկեշտութեան :
Միշտ համեստ ու խոնարհ մնաց . Մտու-
ծոյ խնամոցը գործք սեպելով ամէն եղած-
ները , անդադար շնորհակալ կ'ըլլար իրեն ,
որ այսպէս քաղցրութեամբ կը գլծար վրան :
Հասակը քանի որ կը մեծնար , այնչափ կ'ե-
ւելնար Մտուծոյ վրայ ունեցած իր մտա-
հուսթիւնը . ու կը ջանար իրեն եղած բա-
րիքներուն յարգը գիտնալու :

Իր մեծ ջանքովը կրցաւ օգտակար ըլ-

լայ, նաև իրեն եղած անուական հիւրն-
կալութեան փոխարէնը վճարել՝ աշխա-
տելով միշտ զբօսանաց ժամանակն ալ :
Քաղցրութեամբ բարի սիրտ մը կը ցուց-
նէր իրեն ծառայողներուն, և անոնց սի-
րելի ու յարգելի եղաւ, որով ոչ երբէք
իր ցեղը արհամարուեցաւ. անուական
սպարզութիւն մը վրան կը փայլէր. իր
վարձունքը քրիստոնեայ կուսի մը յար-
մար էին, ու ամէն իր գործոցը մէջ կ'ե-
րենար աստուածալաշտութիւն և առաքի-
նութիւն :

() Գոտոս ամսուն վերջերը՝ կոմսը հար-
կաւոր գործողութիւն մը ունենալով Փա-
լերմն քաղաքը, սլատրաստեցաւ ճամբայ
եղելու, իր խաթունը ու աղջիկը և Առ-
գալիան իրեն հետ պիտի երթային : Ըս-
տելու աղջիկը շատ կ'ուրախանային աս
ճամբորդութեանը համար. վրան զի սրբ-
բուհայն Առգալիայ՝ քաղաքին սլաշտարան
կուսին հանդէսը հոն պիտի կատարուէր :
Վիկտորիա արդէն տեսած էր աս տօնա-
խրմբութեան հանդէսը, ու անոր վրայօք
այնչափ զարմացմամբ խօսեցաւ և շատ ան-
գամ՝ պատմեց Առգալիային, որ ան ալ

տաստիկ փափաքով մը կը փութար տեանիչ
ան փառաւոր և մեծ հանդէսը :

Փալերան քաղաքը՝ որ ունի մեծ նա-
ւահանդիստ, եպիսկոպոստարան մը, ու
150,000 բնակիչ . Իտալիոյ ամուր և գե-
ղեցիկ քաղաքներէն մէկն է . հոն կը նստի
Սիկիլիայի փոխարքան ու ազնուականներէն
շատը : Նոդարձակ է և վայելուչ, ունի շատ
հասարակաց շինուածներ, հրապարակներ,
եկեղեցիներ ու փառաւոր աղբիւրներ : ճամ-
բաները շիտակ ու երկայն են . տանց ա-
մենէն մեծը՝ քաղաքը երկու կը բաժնէ շի-
տակ մէկ ծայրէն մէկալը : Փոխարքային
սլաւատն է ահագին մեծութեամբ և ունի
դուարձալի սլարտէզ մը . սլաւատին առ-
ջեի հրապարակը կ'երևայ Քիլիպպոս Գ .
Սպանիայի թագաւորին արձանը խարխա-
խիմը վրայ՝ ուր իրեն քաջութեանց յաղ-
թանակները, չորս դիւաւոր առաքինու-
թեանց մէջ տեղը փորուած են՝ խոր քան-
դակով ճերմակ մարմարիոն գեղեցիկ քարի
վրայ : Ըս հրապարակին աջ կողմն է սուրբ
Հոգւոյն ըսուած մեծ հիւանդանոցը, ու
ձախ դին փառաւոր մայր եկեղեցին . աս
ձամբուն վրայ ուրիշ հրապարակի մը մէջ,

զեղիցիկ սաղաստի մը դիմաց կանդնած է
Ե Կարողութիւն կայսեր սղնձէ արձանը մար-
մարիոնէ փառաւոր խարսխի մը վրայ .
անկէ քիչ մը վեր Յիսուսեանց հոյակապ
դպրոցը : Մէկալ ճամբաներուն շատին
ծայրը ասոր կը հանէ . և ամէն ճամբու
գլուխ մէյմէկ սաղաստ կայ , մէյմէկ աղ-
բիւր , ու Սպանիայի թագաւորներուն ար-
ձանները՝ Կարողութի Գ . Փիլիպպոսի Բ .
Փիլիպպոսի Գ . ու Փիլիպպոսի Դ : Մեծ
ճամբուն վրայ հղած աղբիւրը ուր է արդա-
րութեան սաղաստը , շատ մեծազարծ է և
սքանչելի իրեն փառաւոր ճարտարապե-
տութեամբը ու մեծութեամբը :

Մէկ խօսքով , հոս ամէն բան կը զար-
մացրնէ զմարդ ու կ'ապշեցրնէ . ուստի
կրնայ դուշակել մէկը թէ՛ ինչ տալաւորու-
թիւն բրին զգաստ ու խելացի Առզալիային
վրայ :

Արբոր Փալերմո հասան՝ չէր կրնար կրչ-
տանալ աս զարմանալի տեսարանները զննե-
լէն . բոլոր ճամբաները լեցուած էր աչ-
խատաւորաց բազմութեամբ , որոնք տոնին
սպտորաստութիւններուն հտեւէ էին : Այս-
դիս անդին յաղթական կամարներ կը շի-

նուէր , ծաղկազարդ կանանչ ճիւղերով
բուրգեր և սիւներ : Տուները զարդարած
էր գեղեցիկ կերպաներով , ծաղիկ ու
թափնիկ , հիւսած սրակներով , ճամբանե-
րը հողի կոշտերով խոտ շարած որ գեղեցիկ
տեսք կու տար , ու կարծես թէ մեծ պար-
տէզ մը դարձեր էր . որ կողմը դարձրնէիր
աչքդ փառաւորութիւն և սրտի զուարճու-
թիւն կը պատճառէր : Քայց աս տեսա-
րանիս գեղեցկութիւնը կ'եւեղնէր՝ բազմա-
մարդ քաղաքիս բնակչաց զուարթ դէմքը՝
որ նշան էր իրենց երջանկութեանը ու հա-
ճութեան . ասով՝ կրօնասէր աս ժողովուր-
դը կը ցուցնէր թէ ինչ յարդ ունի իրեն
պաշտպան սուրբին , որուն յիշատակը ան-
մահացնելու համար ասանկ կ'աշխատէր :

Առզալիս ու Վ իկտորիս անհամբերու-
թեամբ մը կ'սպասէին տօնին օրուան .
վերջապէս հասաւ փափաքելի առաւօտը ,
և քաղաքին բոլոր եկեղեցեաց զանգակնե-
րուն՝ ու հրացանոց ձայները կ'աւետէին
աշխարհաբարոզ այն զուարթ օրը : Քաղ-
մութիւն մարդկան ծովու ակիքներու նման
փողոցները կը վխտային , կենալով երբեմն
երբեմն սրբուհի Առզալիայի պատկերքին :

դիմանայր՝ որ բոլոր քաղաքին մէջը շատ տեղ
զետեղած էր : Աորահասակ աղջիկներ ճեր
մակ զգեստներ հագած դաս դաս բաժ
նուած ջերմեռանդ երգեր կ'երգէին՝ մեծ
ճամբուն անկիւնը շինած խորանին դիմա
յը . բաղմուժիւն տղայոց խումբ խումբ ե
ղած ուրախութեամբ գոյնզգոյն գրօշակներ
կը շարժէին օդին մէջ . զմայլումն մտայ և
զուարթութիւն սրտի ընդհանուր էր ամէն
հասակի և ամէն վիճակի տէր եղող մարդ
կան . թէպէտ և աս իբրև նախատօնակ էր
մեծ հանդէսին :

Իրիկուան ժամը հինդին սկսաւ հան
դիսաւոր թափօրը , որ կ'անցնէր ընդար
ձակագոյն գեղեցիկ փողոցէն . թափօրին
դիմանայր ճամբայ կը բանար գունդ մը
ձիաւոր զօրքերու քաղցրաձայն նուագա
րաններով : Ատքը գեղեցիկ կարգով կու
գային քաղաքական ու զինուորական հան
դիսաւորք , թէ տէրութեան և թէ քա
ղաքին մարդիկները . ասոնցմէ վերջը բաղ
մութիւն եկեղեցականաց ոսկեթել պայծառ
զգեստներով զարգարուած :

Աւ որ ամենէն եւել մեծ տպաւորու
թիւն լրատ Առօղալիային վրայ , պատուա

կան կրօնաւորաց զունդագունդ բաղմու-
թիւնն էր, զանազան կրօններէ դաս դաս
բաժնուած. որոնց խարագնազգեստ կոշտ
հագուստը՝ ուրիշ հանդիսականաց փա-
ռաւոր զգեստներուն մէջ՝ շատ աչքի կը
զարնէր: Աս առաքինի միանձունքը տարին
երկու անգամ կը թողուն իրենց առան-
ձնութեան բնակութիւնը, մէյմը Սար-
մնոյ և արեան, մէյ մըն ալ սրբուհի
Սողալիայի տօնին: Իրենց պարկեշտ շար-
ժուածքը, զգայութեանց սանձ մը դնե-
լով՝ մտաց ամփոփու մը, կերպարան-
քներնուն վրայ փայլած աստուածպաշ-
տութիւնը, կը ցուցնէր որ մեռած են
աշխարհքէս, և թէ՛ վրանին հաղած ան
հաստը քուրձը՝ ընդունայն ցոյց մը չէր
յաչս մարդկան սրտիւ գտնելու հա-
մար: Շատերը վատուծյաճ հաղիւ կը
քաղէին, ու խիստ ճգնութեամբ իրենց ե-
րեսին գոյնը նետած յայտնի կ'երեցնէին
որ ալ աշխարհքիս համար չեն, կարծես թէ
անմարմին հրեշտակներ երկնքէն իջած էին,
որ քիչ մը ատեն մարդկանց հետ խառ-
նուելով, մասնակից ըլլան աս հանդիսին:
Աչքերնին գետինը դարձուցած ամենեւին

մասնակից չեղան հասարակաց խնտումին .
ու խորին մտածութեան մը մէջ ընկղմած՝
կ'երենային որ բոլորովին արքայութեան
վրայ կը մտածեն :

Ասոնց ետեւէն կուգար յաղթական կառ-
քը սքանչելի շէնքով կիսարուոր տաշտա-
ձև , որ ամէն տեսնողները կ'զմայլեցրնէր .
իրը սրածայր բուրգ մը 70 ոտք բարձրու-
թիւն ունէր աս կառքը՝ քաղաքին ամէն
տուններէն բարձր . վրայէ վրայ մէկ մէկէ
պզտիկ պատշգամներէն մէկուն մէջը կե-
ցած էին երգեցողներուն դասը , մէկալին
մէջը երաժիշտները , որոնք փոփոխակի
քաղցր նուագարաննին կը զարնէին և կ'եր-
գէին սուրբին փառաւորութեան ու գո-
վութեանը համար : Ասոնց վրայ կ'երենար
սքանչելի փառաւոր մատուռ մը , սիւներով
զարդարուած , ու անոր գեղեցիկ գմբե-
թին վրայ սրբուհւոյն Առաքելայի ծաղկա-
սլասկ արծթէ արձանը կանգնած : Այսու-
քը շքեղ զարդարուած էր ոսկեթել կեր-
պաններով , սլասկներով , մարգրտով , զըմ-
բուխտով ու տիտակ տեսակ ծանրագին
զարդերով : Արեգակը ալիքներու մէջէն կը
զարնէր լոյսը՝ աս փառաւոր շէնքին վրայ ,

և կրակի պէս այնպէս սքանչելի կը փաշ-
փլէր, որ հազիւ մարդուն աչքը կը դի-
մանար նայելու :

Կառքը կը քաշէին 56 զօրաւոր ջորի-
ներ, փառաւոր զարդարուած . քսանըութը
կառաւար հազուած սրդուած, որոնց լայն
զլխարկները ջայլամի փետուրներով զար-
դարուած էին : Եւ մեծ ճամբուն մէջ
կառքը կամայ կամայ առաջ կ'երթար,
անձիւ բազմութեան մէջէն : Բայց աս
անբաւ բազմութիւնը մէկ հողւով վա-
ռուած էր իր խորին յարգութիւնը նուիրե-
լու աս սուրբին, որ շատ անգամ պաշտ-
պաներ էր զիրենք . ու միաբան օրհնու-
թեան և ուրախութեան ձայներով կ'ող-
ջունէին զինքը ուսկից որ անցնէր :

Արքոր հասան հրասպարակը՝ պաշտօնի
դիմացը կեցաւ թափօրը : Փոխարքան ե-
րկեցաւ սլատուհանը՝ սլատուական արքե-
պիսկոպոսին օրհնութիւնը առնելու հա-
մար՝ որ բոլոր ժողովուրդին կու տար . ու
մէկ կողմէն թնդանօթներու ձայնն ալ կը
լսուէր, մինչև դարձաւ թափօրը մայր ե-
կեղեցին : Եւ գեղեցիկ օրս, որուն յի-
շատակը շատ առնել ի վեր կը սլահն

Վաշխուցի բնակիչքը, ընդհանուր լուսա-
ւորութեամբ մը ըմնցաւ :

Մայատմելի ուրախութեան մէջ էր Սո-
վալիա որ իրեն պաշտպան սուրբին այսչափ
պատիւ կ'ընեն : Իրեն անմեղ միտքը անմե-
լով սա սրտաշարժ ու փառաւոր հանդէսը՝
կը զմայլէր, շնորհակալ կ'ըլլար Մատուծոյ՝
որ արժանի համարեցաւ արքայութեան մէջ
սրսակելու սա սուրբ կոյսը, որ առաքինու-
թեան օրինակ էր, ու ան մեծ քաղաքին
պաշտպանը :

Արկրորդ օրը նորէն կամսին ու Վիկտո-
րիայի հետ ելաւ պտըտելու : Թողունք որ
Սոզալիա բարեպաշտական հետաքրքրու-
թեամբը զմայլի այլ և այլ առարկաներու
գիմացը :



ԳԼՈՒԽ Է

Չարմաւնայի եռօրոտուն ակնհիւ .

Այս պատմած գեղեցիկ հանդիսիս հա-
մար ամենայն աստիճանէ բազմութիւն
մարդկան եկեր էին Փաշերմո : Վինետան
մը մէջ՝ ուր շատ մարդիկ կը ժողովէին ,
նստած էր աղքատուկ զգեստով մարդ մը ,
քովը նուագարան մը դրած էր , գիւմայր
շիշ մը գինի՝ հանդարտութեամբ կը խմէր ,
սպասելով որ եկող մարդիկը շամնան ,
որպէս զի վերջը ամէնուն գիւմայր զարնէ ,
և քանի մը ստակ ձեռք ձգէ :

Այժմ՝ ալ յանկարծ ելաւ տեղէն ու
իբրև կատաղի վազր յարձակեցաւ մար-
դու մը վրայ որ ներս կը մտնէր . վզէն բրո-
նեց ու սարսափելի աչքերը վրան բացած ,
սոսկալի ձայնով մը կանչեց . — Դու կը
ճանչնաս զիս , անօրէն չարադործ . որ
սատանան զքեզ հոս բերաւ : — Թող զիս ,
բաւ մէկալ մարդը , կը խղզես կոր զիս .

— Թողում գրեզ , ինչուան որ աղջիկս
չտաս՝ անհնար է . շատ ատենէ ի վեր կը
վնասուէի զինքը՝ ինչպէս գրեզ ալ , և ա-
հա վերջասպէս գտայ . տուր զաւակս՝ Ան-
կողոս՝ տուր , ժամանակն է՝ տուր աղ-
ջիկս :

— Օ աւակդ , չես յիշեր որ անոր գի-
նը վճարեր եմ ես քեզի : — Չայնդ քեզի
քաշէ՝ գազան , ու ժող մը կանչեց Հերոնի-
մոս . ինչո՞ւ կը յիշես դու իմ նախատինքս ,
և քու վատութիւնդ : Վինովցուցիր զեա՝
անօրէն , ու ան ատեն որ խելքս գլուխս
չէր , դու զրկեցիր զեա աղջիկէս՝ որ մի միայն
օգնականս ու մտիժարութիւնս էր : Տուր
ինձի հիմա . աս վերջի անդամն է որ կ'ը-
սեմ , տուր : — Այախ տուր դու ստակս .
ետքը տեսնանք : — Ա՛ռ՝ տուածէդ վեց
անգամ աւելին՝ ըսաւ , ու քսակ մը լեցուն
ստակ նետեց սեղանատաստակին վրայ : Ա-
նօժի ծարաւ կեցայ , և ուրիշ շատ նեղու-
թեան միջ ձգեցի զեա , որ ժողվեմաս ստա-
կը ու ազատեմ իմ աղջիկս . հիմա տուր
ինձի աղջիկս , ապա թէ ոչ կը խղդեմ
գրեզ :

— Քու աղջիկդ քեզմէ երջանիկ է , քու

օգնութեանդ կարօտ չէ : — Ո՞ր է : —
Ռօղայիան մտաւ :

— Տէր Աստուած , աղջիկս մեռաւ ,
ստակալի նայուածքով մը աչուքները դարձուց
Նիկողոսի վրան , դու ես՝ դու միայն
Թշուառական , ըսաւ , որ մեռուցեր ես
ղինքք . սէ աղջիկս , վրէժդ պիտի առնուի :
Այսքը ստակալի կատաղութեամբ
Հանեց բաճկոնին տակէն սուր մը , ու դող
դրողով սրտաց , որովհետեւ աղջիկս մեռ
ներ է , դու ալ գնա՛ կորսուէ գերեզմանը .
խօթեց սուրբ Նիկողոսին սիրար , որ առանց
խօսք մը հանելու բերնէն՝ ինկաւ գիտինը :

Հարիւր հողիէն եւել մէկէն սրտացին ,
վազեցէք ստաննողին , աւազակին : Ղամբայէն
անցնող դարձողը լեցուեցաւ հոն՝
տեսնելու թէ ո՞րն է , ան աւազակը՝ որ եղբորը
արեանը թաթղիւր է ձեռքը :

Ամսը որ աս միջոցիս կ'անցնէր ան կողմէն .
կեցաւ Վիկտորիայի ու Ռօղայիայի հետ :
Պահապան ղինուորները կը վազեն ,
աւազակը որ ամենն ին դէմ չէր դնէր՝ մատու
նուեցաւ անոնց ձեռքը , և բանտ կը տարուէր :
Բազմութիւնը տեղ բացաւ , և ա-

մէնուն աչքը սարաննողին վրայ էր : Ան ա-
տենը Ռոզալիա որ ճամբուն վրայ կեցեր
էր՝ սլատահեցաւ թշուառ Հերոնիմոսին ,
ու տէր Աստուած ինչ կը տեսնամ . հայրս
է , սլոռալով՝ մարեցաւ ինկուր կումինն
թե ին վրայ : Հերոնիմոս չտեսաւ ամենեկն
աս ձայնէս եղած շիտթը . ու կատուած
կ'երթար դէս ի բանար :

Աս միջոցիս ժողովուրդը կումինն վրայ
ժողովեցաւ . չէին հասկընար թէ ինչ պի-
տի ըլլայ ասանկ փառաւոր հագուած ազ-
նուական աղջկան ըսածը , որ մեծ իշխանի
մը հետ կը քաղէ . չէին գիտէր ինչ սլատ-
ճառ տան աս աղաղակին և ասանկ շուտ
մը մարելուն : Ամէնքը տեսակ տեսակ կար-
ծիքի գացին , և ինչպէս ասանկ առիթնե-
լու միջ շատ անգամ կը սլատահի՝ ժողո-
վուրդը սկսան փնտռել զկումնը . որ հալիւ
միջոց մը գտաւ զինքը բազմութեան կատա-
ղութենէն ազատելու . վասն զի յանցաւորին
դորձակից կը համարէին զինքը , որ ծրու-
տեալ փառաւոր հագուատով կը քաղէր , ու
աղջկան մարիլը ակամայ մատնեց զինքը :
Ամնը հրամայեց որ հոն մտն տուն մը
տանին Ռոզալիան , ու ինքը ծածկելով իր

անունը և աստիճանը , փնտռել տուաւ իր
կառքը , և տուն դարձաւ իր աղջկանը՝ ու
յանցաւոր Հերոնիմոսին զաւկին հետ :
Բժիշկ կանչուեցաւ , որ շատ դեղերով և
խնամքներով խեղճին խելքը զլուխը բերին .
ինքնիրէն եկածին պէս առջի խօսքը աս
եղաւ , ում հայրս , խեղճ հայրս :

Կոմսը , իր խաթունը ու Վիկտորիան
մէկ վայրկեան մը քովէն չհեռացան , ուզե-
ցին հասկըցընել իրեն թէ հայր կարծած
ան մարդը կրնայ ըլլալ որ անոր նման ու-
րիշ մարդ մըն է . բայց ինքը կը պնդէր
թէ խաբուած չէ , և ան աւազակը բուն
իր հայրն է : Վայ ինձի , կանչեց , վայ
թշուառիս՝ որ հայրս սպաննող է , ան ալ
խմ յանցանքովս . ահ , պէտք չէր որ զին-
քը թողուի , խոստացեր էի հողեւալք մօ-
րրս , իմ պարտքս էր փնտռել զինքը ամէն
տեղ . անիկա սպանող չէր ըլլար թէ որ
ես իրմէն չբաժնուէի :

Ըս միջոցիս կոմսը ուզելով ստուգել թէ
յանցաւորը իրաւքնէ Հերոնիմոս Վան-
տութթին է , դնաց դատաւորներուն , և
մէկէն խնայաւ տխուր ճշմարտութիւնը՝ թէ
խեղճ Ռոզալիային հայրն էր : Աղորակելի

աղջիկը թախանձելով հրաման խնդրեց որ
երթայ տեսնէ՝ զհայրը բանախն մէջ, բայց
չննդունեցաւ աս մխիթարութիւնը, որ օ-
րինաց գէմ էր. միայն հրաման եղաւ իրեն
գրով խնայելու Հերոնիմոսին, թէ աղ-
ջիկդ զոր մեռած կը կարծէիր, և որուն
պատճառաւ աս մարդասպանութիւնը ը-
րիր, դեռ ողջ է, ու Ախնայլթի կոմսին
քովն է, կը սիրէ զինքը զաւկին պէս :

Այլ մտածէ թէ ինչ զարմանք պատ-
ճառեց Հերոնիմոսին՝ երբոր աս թուղթը
առաւ : Բայց աս գէպքիս մէջ յայտնի
կ'երևնար թէ ինչ ատօխճան գազանու-
թեան կը հասնի սնորհնութեան ետեւ ե-
ղած մարդը . վասն զի չարագործը ամե-
նեին ցաւ մը շիցուցուց գործած մեղքին
վրայ . մանաւանդ թէ գովոց զինքը որ իր
աղջիկը յափշտակողէն վրէժը հանեց :

Դատաստանը չերկնցաւ . դատաւորնե-
րը մահու դատապարտեցին զՀերոնիմոսը :
Աոմնը մեծ զգուշութեամբ մը կամաց կա-
մաց յայտնեց Արողալիային աս սև լուրը .
խեղճ աղջկան խելքը զլիսէն թռաւ, ին-
կաւ կոմսին ոտքը, կ'ազաչէր որ միջնորդ
ըլլայ դատաւորներուն, և ազատէ Հերո-

նիմոսը մահուանէ : Ա իկտորիա իր հաւա-
տարիմ բարեկամը՝ միատեղ կը ջանար հօրը
սիրտը շարժելու , և ստիպելու որ մահա-
պարտին ազատարար ըլլայ : Կումը չկը-
ցաւ համբերել՝ շուտ մը գնաց դատաւորնե-
րուն , ու իրեն պատուիւք աս շնորհքը ըն-
դունեցաւ՝ որ մահուան վճիռը փոխեցաւ ,
և հրաման եղաւ մինչև ցմահ մնալու տե-
րութեան բանտի մը մէջ :

Իսելքէ մտքէ դուրս ուրախութեամբ
սկսաւ ըսել Առդալիա . — Ա՛հ ի՞նչ երջան-
կութիւն , գոնէ աս մխիթարութիւնս ու-
նիմ որ մահուանէ ազատեցի զհայրս , և կը
յուսամ որ թող կը տրուի ինձի՝ մնացած
օրերս իրեն ծառայութեանը մէջ անցընե-
լալ : Կումը խնդրեց , ու հրաման առաւ
որ աղջիկը տեսուի հօրը հետ , և ուզեց
որ Առդալիա հօրը տայ աս աւետիսը՝ թէ
ազատեցաւ մեռնելէն , ու պատիժը թե-
թեցաւ :

Մեծ սիրով մը վազեց Առդալիա բան-
տը . Հերոնիմոս չէր հաւտար աչուրնե-
րուն՝ երբոր տեսաւ իր աղջիկը մեծցած ու
զեղեցիկ , գարն որ մէյմ՝ ալ տեսնելու յոյս
չունէր : Առդալիա անանկ սիրով մը վա-

զնց հօրը գիրկը , որ կարծես թէ խելքը
թուուց , ո՞վ հայր , սիրելի հայրս , կանչեց ,
ասա վերջապէս կը տեսնամ գրեց :

Հերոնիմոս առջի շխոթութենէն վերջը ,
քաղցրութեամբ ու սիրով՝ որ ոչ երբէք
ցուցուցեր էր իրեն , ըսաւ , ի՛նչ ուրախու
թիւն աղջիկս , որ դարձեալ կը տեսնեմ
գրեց . ուրեմն՝ Ալկողոս խաբեց զնա ըսե
լով թէ մեռաւ : Պատմէ ինձի ինչ որ պա
տահեցաւ գլխուդ՝ մեր թշուառ բաժնուե
լէն վերջը :

Աղջիկը քաղցրութեամբ ու խոհեմու
թեամբ սրտմեց իր առջի խեղճութիւննե
րը ու ետքի բարեբաղդութիւնը : Հերոնի
մոս դարձեալ իր սովորական բնութիւնը
ձեռք առնելով , առանց կարեկից ըլլալու՝
պաղ սրտով մը ըսեց , ու սրտասխան
տուաւ թէ՛ ուրախ եմ որ մշապի կենացդ
վերջ եղեր է . ու իմ միակ մխիթարութիւնս
աս է՝ որ չմեռած տեսայ աղջիկս . և մահը
ամենեւին վախ մը չի բերեր մրաս :

Արտի նեղութեամբ մը ըսաւ Առզալիա .
չմեռնիս պիտի , ես աս շնորհքս առի քեզի
համար : — Ի՛նչպէս ասանկ մեծ չարա
գործի մը կեանքը պիտի թողուն . շատ

աղէկ էր որ մեռնէի . Փալերմոյի դահիճը
աղէկ գիտէ իր արհեստը , մէկ զարնելով
կը ձգէր գլուխս ոտքիս առջին , ու այս-
պէս ամէն բան կը լռմննար . հիմա քսան
քսանը հինգ տարի հոտած բանտի մը մէջ
վայ դիտուս պիտի բերեն :

Ոտղալիս աս խօսքերս լսելով դող եկաւ
վրան , և լալով ինկաւ թշուառ հօրը գիր-
կը ու ըսաւ . — Կեանքը միշտ Մատուծոյ
բարիքն է , ու Մատուած կը պարգևէ քեզի
աս՝ որ ժամանակ ունենաս դարչելի մեղ-
քերդ զղջալու և քաւելու քու յանցանք-
ներդ : — Դու ուզածիդ պէս ասպաշխա-
րութեան ու մեղքերու թողութեան վրայ
կը խօսիս , դու որ հարստութեան մէջ կը
լողաս , և կեանքի վշտերը չես դիտեր . դու
որ ամենևն չես հասկընար՝ թէ բանտի մէջ
քաշելու ինչ ծանր նեղութիւններ կան . —
Հայրիկ քեզի հետ պիտի կենամ բանտի
մէջ , և քու խեղճութեանդ մասնակից ըլ-
լամ . քեզի հետ պիտի քաշեմ՝ անօթու-
թիւն , ծարաւ , տաք , ցուրտ և ամէն
նեղութիւն . գրեզ չեմ թողուր ամենևն
բայց եթէ մահը բաժնէ մէկմէկէ :

— Ի՛հհ , սա աղջկանը կրօններուն

նայեցէք . քու հասակդ դիւրաւ կը վազէ
ան բաներուն ետեւէն զօրոնք չճանչնար ,
բայց երբօր գործքով կատարելու ժամանակ
կը գայ կ'ըսկսի սարսափիլ . դու ծաղը կ'ը-
նես բանտին նեղութիւնները , բայց քեզի
չթողուն պիտի որ իմ հետս ըլլաս՝ ուզած
ատենդ . ուստի թող քու երազներդ , ու
գնա կոմսիդ քով և երջանկութիւնդ նայէ :

— Հայր , ես քեզի հետ պիտի գամ ,
տարակոյս մի ունենար . աս քու աղջիկդ
այնչափ սրտոտ է որ չես կարծեր . հրա-
ման պիտի առնեմ քովդ կենարու , և քու
ծերութեանդ ծառայելու : Ան բանը որ
դու կարողութենէս մեր կը սեպես՝ իմ դի-
մացս ոչինչ է . ես կ'ուզեմ իմ մօրս մեռ-
նելու ատեն տուած խրատը սլահել . Աս-
տուծոյ բարութիւնը իմ ուժս կը շատցնէ
ու ջանքս կ'օրհնէ . բնաւ մի տարակուսիր :

— Առաջուց բոլի քեզի , երազ է զրու-
ցածներդ . քու երեակայութիւնդ զքեզ կը
խաբէ , չես ճանչնար մտանգները օրոնց
մէջ կը ձգես զքեզ : Աւստի աս մտած-
մունքները հանէ մտքէդ , դու բանտը կե-
նալու մարդ չես . քու հասակիդ և քու
բնութեանդ դէմ է ատ : — Ան՝ որ իմ

սիրաս կը դրդէ քեզի ընկեր և օգնա-
կան ըլլալու, նոյնը կրնայ ամէն վտանգ-
ներէ ալ ազատելու իմ անամեղութիւնս :
Իմ յոյսս անոր վրայ դրեր եմ. գիտեմ որ
մենք մեզմէ բան չենք կրնար ընել . բայց
տարակոյս չունիմ, որ իրեն շնորհքովն ան
բանը որ դժուար կ'երևայ մեզն' դիւրին
կ'ըլլայ :

— Բայց քեզի խենդ սլիաթի ըսեն : —
Վնենեկն հոգս չէ, միայն թէ կարենամ
զքեզ ազատել . թող աշխարհքս ինչ որ ու-
զէ խօսի վրաս :

Աս խօսքերէն ետքը սիրով պագտուե-
ցաւ հօրը հետ ու գնաց, խոստանալով
թէ որչափ կարելի է շուտով դառնայ :

Ողբալիայի մտածած խորհուրդը՝ յան
կարծակի տղայական բերմունքով մը չէր .
այլ միտքը կը վկայէր թէ կրնայ առաջ
տանիլ : Անչափ սիրով մը պատրաստ էր
ամէն նեղութիւն քաշելու հօրը համար,
միայն թէ կարենար իրեն օգտակար ըլ-
լալ, և ամէն հոգը ընել վրան որպէս զի
մուշար ճամբէն հանէ զինքը և կրօնքի ու
առաքինութեան ճամբան մտցնէ : Աս
քաղցր փափաքներով լցուած տուն գար-

ձառ , ու պատմեց կումսին իր հօրը հետ տեսնուիլը : Աումը մեծ զարմանքով լսեց աղջկանը կտրիճ մտածմունքը . իսկ Աիկտորիա սկսաւ լալ :

Ազնիւ սրտով աս բարեկամները ամէն ջանք ըրին և ամէն հնարք բանեցուցին , որ Առղալիան ետ կենայ աս մտածմունքէն . բայց առաքինի աղջիկը ամէն արգելքներու յաղթեց՝ աս պատասխանը տալով , թէ՛ հայրս է չեմ կրնար թողուլ :

Աումը համոզելու ամէն հնարքը բանեցրնելէն վերջը , զարմանալով օրիորդին այսպիսի գերազանց առաքինութեանը վրայ , վերջապէս հաւանեցաւ օգնելու իրեն , և հրաման առնելու որ հօրը ընկեր ըլլայ :

Փոխարքան՝ իմանալով Առղալիային որդիական կատարեալ սէրը՝ անանկ անօրէն չարագործ հօրը վրայ , զարմանալով մը ըսաւ . ինչո՞ւ Առղալիային չեն նմանիր ամէն աղջիկներ :

Առանց դժուարութեան ելաւ հրամանը . ետքը Առղալիա ու իր հայրը յանձնուեցան արքունի նաւապետի մը , որ ուրիշ չարագործներու հետ տանի զանոնք Աիկլիայի մէկալ ծայրը եղած բանտը :

Մոզալիա անհանգիստ սրտով կ'սպա-
սէր ճամբայ կլու օրուան . և աս միջոցիս
ստէս կկեղեցին կ'երթար Աստուծոյ օգ-
նութիւնը խնդրելու . ջերմեռանդ սրտով ու
հրեշտակային սիրով սուրբ աստուածած-
նայ խորանին դիմացը ինկաւ , ու անոր
պաշտպանութեանը յանձնեց զինքը ու իր
հայրը : Ասքը երախտագիտութեան սի-
րոյ վերջի բարևը տուաւ ազնուական ըն-
տանեաց՝ որ այնպիսի բարերարութեամբ
քովերնին ընդունած էին զինքը , և զհայ-
րը մահուանէ ազատած . ամենէն վերջը
լալով ողջով բաժնուեցաւ . Վ իկտորիայէն՝
զորն որ քոջ սէս կը սիրէր : Ամնը տուաւ
իրեն քսակ մը լեցուն ոսկի , խոստանալով
ամէն վեց ամիսը մէյմը նոյնչափ ստակ
խրկելու . դարձեալ ստիպեց որ չըլլայ թէ
իրեն օգնութեանը կարօտ եղած ատենը՝
քաշուի ու ձայն չհանէ : Մոզալիա խօսք
տուաւ ամէն ըսածները կատարել , և ան
ազնուական բարերարներուն քովէն ելաւ :

Ով կրնայ պատմել Մոզալիայի սիր-
տը տակնու վրայ ընող զգացմունքը՝ նա
մտնելու ատենը : Աւաւապետը անոր առա-
քինութեանը ու տարիքին պատշաճ յար-

զանոք ընդունեցաւ զինքը . բայց առաքինի աղջիկը աչքը դարձնելով դատապարտելոյ երկայն շարքին՝ որոնք շղթաներով կապուած կարգով դրուած էին , սոսկումն եկաւ վրան , և հազիւ կրցաւ ծածկել իր սրտին վախը :

Այս չարագործներու մէջ նստած էր իր հայրը : Ա՛հ , ի՛նչպէս իր ձեռքը՝ չէր անխեղձ Հերոնիմոսին տեղը նստիլ , ու իր սիրելի հօրը ծանր շղթան ինքը վերցնել :

Այս չարագործները անամօթ նայուածքով մը կը դիտէին համեստ կոյսը . չգիտնալով անոր հօն գալուն պատճառը . բայց երբոր տեսան որ Հերոնիմոսին կը մօտենար ու սիրով կը պագնէր անոր ձեռքերը՝ որ Սիկողոսին արեանը թաթխուած էր , սկսան զարմանքով խօսիլ վրան , շատ ատենէ ի վեր հայհոյութեան սովորած անմարդիկը : Ամանք կ'ըսէին . — Այս ի՛նչ զարմանալի բան է , տտանկ ինքըզինքը նուիրել հօր մը որ արժանի չէ սիրոյ : Արիշ մը պատասխան տուաւ . — Թէ որ ես ասոր նման աղջիկ մը ունենայի՝ հիմա հոս չէի ըլլար :

Ոտզալիա նստաւ նաւապետին ու նա

ի քահանային մէջ տեղը , առ Քափուչին կրօնաւորը շատ պատուական անձ մին էր :

Հերոնիմոս որ չէր կարծէր թէ այսչափ առաքինութիւն ունենայ իր աղջիկը , ձեռքը երկնցուց անոր ու ըստ . — Առգալիա , խօսքիդ վրայ կեցար . դու Հերոնիմոսին արժանի աղջիկն ես . քու քաջասրբութիւնդ սիրտս շարժեց , ու ինձի շատ օգուտ պիտի ընէ :

Ատրը քահանան քանի մը բան խօսեցաւ իրեն , Աստուծոյ ողորմութեանը վրայ . և թէ՛ Աստուծոյ գթութեանց զիրկը պէտք է վազին մեծ մեղաւորները , զորոնք չի մերժեր իր խնամքէն : Տայց անարժան չարագործը ծաղր ընելով մը պատասխան տուաւ . — Հիսա ինձի քրիստոնէական սորվեցնելու ատենը չէ . թէ որ ուզես նաս երբեմն դաւաթ մը գինի կամ օղի տալ , ան ատեն դքիզ յօժարութեամբ կ'ընդունիմ . ասիկա խօսքերուդ ճամբայ բանայ :

Աս անպարզտական ցուրտ խօսքը լսելով Առգալիա՛ հատաչեց , ու սրտին մեծ ցաւովը իմացաւ որ հայրը դեռ ինքը զինքը չէ փոխած , գլխուն եկած ու գալու փոր-

ձանքներուի : Տայց նաւապետը սաստիկ յանդիմանեց թշուառականը , ու ամէնուն դիմացը ըսաւ , թէ՛ չեմ համբերեր ասանկ խօսք մը լսելու , ու ինձի խիստ հրաման տրուած է որ ինչ և իցէ անկարգութիւն մէկէն սրտածեմ : Ես վերջի խօսքը քիչ մը վախցուց չարագործները , որոնց շատր ի մանկութենէ անօրէնութեան մտտնուած մարդիկ էին . և անոնք որ Հերոնիմոսին ծաղրածութեանը վրայ կը ծիծաղէին , մէկէն ձայներնին քաշեցին :

Նաւը նաւահանգստէն ելած՝ կամաց կամաց Փաւերմոյէն կը հեռանար . Առ զալիս վերջի նայուածքով աչքը դարձուց քաղաքին վրայ՝ ուր երջանիկ կեանք մը ունէր . ու իր սրտի ցաւը սաստկացաւ մտածելով որ կորսնցուց ան պատուական ընտանիքը որ այնչափ մեծ սէր ցուցուցեր էին իրան : Վարձուց աչքը վանքի բլուրին վրայ՝ ուր կը բնակէին իր սիրելի ընկերները : Տայց աս մտածմունքներուն մէջ այնչափ սաստիկ ցաւ չիմացաւ , որովհետեւ դտեր էր իր հայրը , ու անոր հոգը իր իրան էր . ահա աս միսիթարութիւնը մեծապէս կը դուարձացրնէր զինքը , քան թէ

հոգի գաղթը որ ցաւալի կ'երևնար իրին :
Ար յուսար ատենօք շահելու իր հայրը ,
հաշտեցրնելու Աստուծոյ հետ , զոր շատ
բարկացուցիւ էր . իսկ անկէջ վերջը ցա-
ւալի չէր ըլլար իր վնձակը : Աս եղաւ իրին
մի միայն վախճանը . անդադար կը մտա-
ծէր թէ ինչպէս կրնայ ըլլալ որ ասանկ
մեծ շնորհք մը շարուի իրին Աստուծու ,
որուն ձեռքն է մահականացուաց սիրտը , որ
Վիրանանի ահագին մայր ծառերը կը խոր-
տակէ , որ ամբարտուան մեղաւորներուն
սիրտը կը խոնարհեցրնէ հեղութեամբ ա-
պաշխարութիւնը գրկելու :

Աս մտածմունքներուս մէջ Առողջալիա
ուշ չէր դնէր ծովու հանդարտ և դուար-
ձալի սեռարանին : Արկիւրը հեռացեր ան-
երևոյթ էր եղած . և միայն Ամնայի
ձայրը կ'երևար միայլով , երբոր իրենք ժու-
ղովեցան ցորեկուան կերակուրը ուտելու :
Առաքինի աղջիկը հօրը հետ ուզեց ուտել
կերակուրը , որուն առջևը գրեւ էին կտոր
մը սև հայ ու սլատառ մը խողի եղ , բայց
նաւապետը չթողուց , և իր քովը սեղան
նստեցուց : Առողջալիա խնդրեց որ կերա-
կուրէն վերջը գաւաթ մը գինի տրուի շի-

րոնխմոսին՝ խոստանալով որ կը վճարէ
ինքը . իսկ մէկալ դատասարտեալները
նախանձեցան աս բանիս ու չար աչքով
սկսան նայիլ :

Քահանայն ալ սեղանի վրայ էր , և
Ռողալիա յարմար առիթ մը գտնալով
յանձնեց անոր իր հօրը հոգւոյն փրկու-
թիւնը : — Ապահով եղեր , ըսաւ իրեն
սրատուական կրօնաւորը , Աստուած սխ-
տի ողորմի աս մեծ մեղաւորին . բայց կը
վախեմ՝ որ աս կատաղի սիրտը , ու երկար
ատենէ ի վեր Աստուծոյ շնորհացը դէմ
սրատերազմող ապստամբ՝ հոգին նուաճե-
լու համար՝ Աստուծոյ արդարութիւնը մեծ
սրտիժ մը չտայ իրեն : Դու զօրացիր ,
Աստուած ամենակարող է . կը յուսամ
որ քու որդիական միամխտ սէրդ Աստու-
ծոյ յախտենական ողորմութեան կշիռը
կը ծանրացնէ , ու ետքը կը մխիթա-
րուիս՝ հոգի մը վաատկելով երկինքը :

Ռողալիա սկսաւ լալ , և յոյս մը ա-
ռաւ հօրը սրտին փոխուելուն . խոստա-
ցաւ կրկնապատկել իր փայթը , որպէս զի
Հերոնխմոսին դարձը ժամ մը առաջ յա-
ջողի :

Վառապետը թէպէտ ամէն ուշադրու-
թիւն և ջանք կը ցուցունէր Սոզալիային
փրան՝ չափէն եւել հոգ ընելով քաղցրայր-
նելու անոր խեղճ վիճակը, բայց Սոզա-
լիա իշտալի կեանք մը ունէր. ժամանա-
կին մէկ մասը աղօթքով, մտածականով
կ'անցնէր, ու սրարասլ եղած ատենը ձեռա-
գործի հետ կ'ըլլար :

Հրաման ունէր ամէն առաւօտ տես-
նուելու հօրը հետ և խօսելու, բայց որով-
հետև Հերոնիմոս ուրիշներուն հետ շղթայի
զարնուած էր, անոր համար չէր կրնար
առանձին խօսակցելու : Այս նեղութիւնը
հորը շատ ծանրացաւ իրեն, երբոր անա-
մօթ ան չարագործները զինքը տեսածնուն
պէս անատակ խեղկատակութեամբ խօս-
քեր կ'ըսէին իրեն :

Քանի մը անգամ քահանային հետ եր-
կուքը մէկէն ամէն ջանք կ'ընէին զզջումի
բերելու աս յամառ ու քարասիկտ մեղա-
ւորը . Հերոնիմոս կարծես թէ առանց
ընդդիմութեան ուշ կը դնէր հոգւոյ փր-
կութեան խօսքերուն : Այս տեսնելով աղ-
ջիկը քիչ մը սիրտ կ'առնէր ու կը մխի-
թարուէր, բայց անկարելի բան կ'երեւալ

որ Հերոնիմոս իր սրտին խորը իջնայ ,
քննէ զինքը և յանձն առնու խոստովա-
նիլ թէ մեղաւոր է՝ ինչպէս էր ճշմար-
տասլէս :

Գնդունայն կը խոստանար պատուա-
կան քահանայն թէ իրեն հետ կը քննէ կու-
րութեան և խաւարի միջ ընկղմած խրղձ-
մտանքը , որ ինքը շփոթած չէր համար-
ձակէր քննելու . ընդունայն կ'աշխատէր՝
համոզելու ամէն կերպերը բանեցրնելով , որ
Աստուծոյ սէրը վառէ անոր սրտին միջ ,
ուսկից երկար ատենէ ի վեր հարածուած էր
բոլորովին , և անպտուղ ցամաք ու կոշտ
երկիր մը դարձած էր : Այս կայծը թէ
որ վառէր մէյ մը անոր մտքին մէջ . անկէց
վերջը դիւրին էր իրեն իմանալ թէ որչափ
հեռացեր է ճշմարտութեան ճամբէն , և
զրկուեր է ամէն առարկնութենէ :

Մոզալիա սատիկ կը վշտանար հօրը
խստասրտութեանը համար , ու շատ ան-
գամ անմխիթար կուլար : Քահանայն որ
երեսուն տարիէ ի վեր խոստովանահայրու-
թեան պաշտօնին մէջը փորձ և հմուտ էր ,
առանց լքանելու սիրտ կու տար , և կը
զրուցեր թէ շնորհքի ժամանակը գեռ չէ

հասած , պէտք է յուսով սպասել . բայց
կը կասկածիմ չըլլայ որ աս հպարտ մար-
դուն՝ Աստուծմէ մեծ պատիժ մը հաս-
նի , որուն նմանը ինչուան հիմա չէ ա-
ռած : Աս պատուական կրօնաւորը խնա-
ցաւ որ Հերոնիմոսին դարձին զլիաւոր
արգելքը մարդկային ակնածութիւնն էր :
Վաւապետը սաստիկ յանդիմանութիւն մը
տալէն վերջը , ամպարիշտ շարադործները
ալ չէին համարձակեր իրենց անկրօնու-
թեան խօսքերը զրուցել . բայց անոնցմէ
մէկը յանկարծ եթէ կրօնքի վերաբերեալ
խօսք մը բանար , մէկէն ծիծաղի կ'առ-
նէին : Աս անկարգ մարդկանց սրտին մէջ
այնպէս արմատացեր էր անօրէնութիւնը ,
որ պատուական կրօնաւորին խօսած բարի
խրատները , անոնց սիրտը շարժելու տեղը ,
պատճառ կ'ըլլար հայհոյութեան և ան-
կարգ կատակներու : Ահա այս էր շարա-
դործներուն ցաւալի վիճակը :

Աս նաւարկութիւնը ինչուան ան ատե-
նը յաջող ըլլալով , Առօղալայի դիւցազ-
նական առարկիւնութիւնները յայտնի երև-
նալու առիթ մը չէր եղած . թէպէտ և
աղջիկը ամէն նեղութեան պատրաստ էր :

բայց չէր գիտէր ամենեւին որ աշխարհքիս
մէջ բարի գործքը դժուարութեամբ կ'ըլ-
լայ . մանաւանդ երբոր կրքերու հետ պա-
տերազմելով չար բնաւորութիւնը փոխել
ջանայ . վասն զի չար սովորութիւնները
բարի առաջագրութեանց դէմ կը կռուին
միշտ :

Ան անմեղ աղաւնին կը կարծէր թէ բա-
ւական է միայն աղաչել և պաղատիլ հօրը՝
որ խելքը գլուխը ժողովէ . և թէ՛ մեղքին
զէշութիւնը միայն դնելով անոր առջև ,
կրնայ մեծ սոսկում մը պատճառել անոր
սրտին մէջ ամէն մեղքերու վրայ : Այս որով-
հետև ինքը միայն մտքէն անոյնելով մեղքը ,
կը դողար կը սոսկար , ու չէր կրնար խղճ-
մտանքը հանդիստ բռնել . ասանկ ալ կը
կարծէր որ ամէն քրիստոնիսայ խղճմտանքի
աս փափկութիւնը ունենայ :

Աւտի իր միամիտ բարեսրտութիւնը
աս փորձով հրահանգեալ յայտնի իմացաւ
որ պատուական կրօնաւորին ըսածները
ճշմարիտ են , և աս սպասամբ սիրտը
նուաճելու համար մեծ պատիժ մը պէտք
է : Մէկ կողմանէ ալ կը փափաքէր որ
անսովոր փորձանք մը գլուխնին գայ , որ-

այէս զի աս մեծագոյն շարեաց վերջ ըլլայ ,
և իր հայրը առ Աստուած դառնայ . բայց
մէկ կողմանէ ալ աս բանիս յաջողութեանը
վրայ միտքը տարակուսի մէջ էր :

Աս միջոցիս՝ շարագործներուն զլուսը
մտրկախառն փոթորիկ մը կը ժողվուէր .
և շանթաձիգ փայլակներ՝ որ շատ առնէ
ի վեր դերագոյն դատաւորին ողորմած ձե-
ռացը մէջ թմրեք մնացեր էին , մէկէն սկը-
սան վառիլ :



ԳԼՈՒԽ Ը

Առաքիւնոսքեան վարձ .

ԻՐ ԻՎՈՒՆ մը Առողալիա իր խցին մէջ
քաշուած աղօթքի հետ էր . ծունկ չողած
Յիսուսի սրատկերին դիմացը՝ զար առննօք
տուեր էր իրեն վանքին սրատուական ար-
բասուհին , իր սրտին ջերմեռանդ աղաչան-
քը առ Մատուած կ'ուղղէր : Արկար ա-
տեն իր միտքը աղօթքին քաղցրութեամ-
բը , կ'զմայլէր . ու կը յափշտակուէր ան
երկնային գաւառները , ուր բարեպաշտ
հոգին կը տեսնէ հրեղէն հրեշտակնե-
րը՝ որ մեր աղօթքը յաւիտենականին դի-
մացը կը հանեն : Առողալիա երկար ա-
տեն աղօթքի սրարսպելով երջանկութեան
մէջ ընկղմած էր . և որովհետեւ ան օրը
սաստիկ տօթէն նեղութիւն խմացեր էր
աղջիկը՝ ինքրզկնքը Մատուծոյ նուիրեց ,
ու պատկածին պէս մէկէն քունը աչքերը
զոցեց ու հանդիստ տուաւ ցաւերէն :

Առողջալիա հազիւ քանի մը ժամ քնա-
ցիր էր՝ մէյժ՝ ալ յանկարծ արթնացաւ սու-
կալի աղաղակէ մը . իրենն կ'երևար թի-
հրացանի ձայներ կը լսէ և զէնքերու շշն-
կոյ , հաքը սոսկալի հայհոյութիւններ և
հրդմունքներ՝ որ նաւասպետին ձայնը կը
խափանէր . ան աղաղակներուն միջը կըր-
ցաւ որոշ լսել աս խօսքերը . — Օհնքեր-
նիդ ձգեցէք , անձնատուր եղիք , ամէն
ընդխմութիւն անօգուտ է :

Ո՛վ կընայ երևակայել խեղճ աղջկան
սարսափը , ի՞նչ պիտի ըլլայ պատճառը ,
կ'ըսէր ինքն իրենն , աս աղաղակին , որ եր-
թաշով կը սաստկանայ : Ա՛հ , նաւուն վրայ
ուսաղակներ հասած պիտի ըլլան , նաւաս-
տիք իրենք զիրենք պաշտպանել ուզեր են և
չկրնալով զէմ գնել տոխարուեր են անձ-
նատուր ըլլալու . և ես գերի պիտի ըլ-
լամ անոնց անառակութեանը , խկ հայրս ,
ի՞նչ պիտի ըլլայ ինձմէ հեռու , որ իրեն
համար բոլոր կեանքն՝ դրեր եմ : Ո՛վ Մ-
տուած իմ , կանչեց՝ խելքը գլխէն գացած ,
օգնէ ինձի . ո՛վ սուրբ կոյս Մարիամ մայր
մայրութեանս սրահէ քու աղջիկդ , ես բիւր
անդամ կ'ուզեմ մեռնիլ քան ուրանալ հա-

ւատքս, քան թողուլ առաքինութեան ճամբան :

Արևու ժամ ասանկ նեղութեամբ շար-
շարուեցաւ խեղճ աղջիկը . ետքը վերջա-
պէս դադրեցաւ խոռութիւնը . Առզալիա
կարծէր թէ անհաւատներուն ձեռքը մատ-
նուած է : Իրեն աս վախին մէջ՝ կլաւ ան-
կողինէն հագաւ զգետը , ու ծնկան վրայ
դալով ան տեղը որ քիչ մը առաջ աղօթքի
նստեր էր , կը դողար կարծելով թէ մէկէն
վրան պիտի վազեն քանի մը կատաղի բար-
բարոսներ յախշտակելու զինքը . բայց եկող
գացող չեղաւ : Ա երջապէս չկրնալով հաս-
կրնալ թէ ինչ պիտի ըլլայ ան սոսկալի
խոռութենէն վերջը՝ աս հանդարտութիւ-
նը . միանգամայն չհամարձակելով խցէն
դուրս ելլել որ բանին էութիւնը խմանայ ,
զգեսաներովը անկողինն վրայ ինկաւ ու
սկսաւ աղօթք ընել :

Մտաւտեան դէմ երկինքը լուսնալու ա-
տենը՝ նաւապետը խրկեց ծառային մէկը որ
կանչէ զինքը : Առզալիա դողդրղալով վեր
ելաւ ու տեսաւ որ բոլոր տախտակամածը
արիւնով շաղախած է . նաւապետը թե ին-
մէկը փաթտեր էր , ու նաւատտիներէն շատ

վերաւորուած էին . հայրը իրեք շղթայով
 նաւուն կայսին ամուր կապած էր , ու ա-
 ըինը բոլոր վէրքերէն վար կը վազէր : —
 Ա՛յ տէր Եստուած , կանչեց սահմրատ-
 կած աղջիկը , սա ի՞նչ պիտի ըլլայ : —
 Վերջի բարեդ տուր՝ անզգամ հօրդ , ը-
 սաւ նաւապետը ահաւոր ձայնով մը .
 վասն զի քառորդէ մը պիտի մեռնի : —
 Տէր Եստուած , ի՞նչ է ըրեր :

— Ես անիրաւ չարագործները միա-
 բաներ են ինձի՝ և իմ նաւաստիներուս
 դէմ . գիշերը մութուն շղթանին կոտրե-
 ցին ու վրանիս վազելով նաւաստիներէս
 շատը սպաննեցին . և քու հայրդ ծանր
 մարդասպանութիւն մը ըրաւ որ արդէն ին-
 քը մեռնելու արժանի սպաննող մըն էր :
 — Ա՛յ պարոն՝ ներէ՛ իրեն , ըսաւ Առողա-
 լիա յուսահատ ձայնով մը , աղաչեմ՝ ներէ՛
 ու ոտքը ինկաւ : — Ա՛յ , ել Առողալիա ,
 ըսաւ նաւապետը աչքերը դարձնելով , ալ
 յոյս չիկայ ներումն գտնելու . հայրդ կրը-
 կին և կրկին անզգամ արժանի է մահուան :
 Այլ մէյ մը , տես ծովուն երեսը ծփած
 հաւատարիմ զինուորներուս մարմինը , ո-
 ըրոնք սա անարդ մարդիկը իրենց կատա-

դու թեամբը ջարդեցին . ու ես աս անպատճառ
աւազակներուն թողութիւն տամ : Գէ ,
չէ , մահապարտ են ամէնքն ալ մեռնին :

Հերոնիմոս յուսահատ ձայնով մը ըսաւ ,
— Ալ ինձմէ յոյսդ կտրէ , աղջիկ , քառորդ
դէ մը դիս պիտի ըսա , բայց թող հիմա որ
մեռնիմ : — Ի՞նչ կ'ըսես՝ հայր , դու ատ
ցաւաղի քաջութիւնը ունիս՝ ատանկ անար-
դարանք մեռնելու : Ա՛հ , գոնէ հոգիդ մտա-
ծէ , յախտնականութիւնը որ քանի մը
վայրկենէ վերջը պիտի տեսնես ուսկից որ
չես վախնար . և Աստուծոյ ստակաղի դա-
տաստանին դիմացը պիտի ելես : Արկին
մարդաստարանութեան յանձանքը վրադ
ձանրացեր է , և դու կ'ուզես ատ թշուառ
վիճակիդ մէջ Աստուծոյ արդար դատա-
ւորիդ դիմացը ելիլ . Աստուծոյ սիրուն
համար , մօրս սիրուն համար՝ դժա քու
հոգւոյդ :

Ատքը նաւասպետին դառնալով ըսաւ .
— Պարոն , յիշէ՛ Ալիմալթի կոմսին տուած
խոստանունքդ . խօսք տուիր իրեն պաշտ-
սրանելու աս խեղճ հայրս : — Տաքութեամբ
մը պատասխան տուաւ նաւասպետը , խօսքս
ես պահեցի , շատ քաղցրութեամբ վա-

րուեցայ քու հօրդ հետ՝ որ ուրիշներուն չցուցուցի . ու իմ բարերարութեանցս փոխարէն՝ աս չարագործը միաբանեցաւ մէկալ աւազակներուն հետ մեզ սպաննելու : Ամէնուն համար մէկ արդարութեան օրէնք կայ , ու պէտք է որ աս արդարութիւնը տեղը երթայ . հայրդ ու իր ընկերները՝ հարկաւ պիտի մեռնին . անոնցմէ մէկ քանին արդէն իրենց շարութեան պատիժը առած են :

— Յիսուսի անուանը համար ըլլայ՝ ողորմէ՛ , ըսաւ խեղճ աղջիկը ցաւալի ձայնով մը : — Ողորմութիւն , ողորմութիւն կ'ըսես դու , արգեօք արժանի է ողորմութեան աս հրեշտակ : Տոնէ՛ , տես Առողալիա , ըսաւ նաւապետը ու միացուց սաւանի մը ծայրը . բացաւ , ինչ կը նայիս՝ նաւապետին տղուն մարմինն էր մէջը , զոր Հերոնիմոս ան ցաւալի գիշերուան մէջ մեռուցեր էր :

Առողալիա սահմրուտկած կտ կտ քաշուեցաւ և խօսքը բերանը մնաց . ակամայ ստակալի աչքով մը նայեցաւ հօրը վրայ , ետքը սիրտը ամբոյրնելով նաւապետին դարձաւ : — Պարոն , ըսաւ , մէկ բան մըն ալ

մնայ ինձի ըսելու , Հօրս հօգւոյն փրու-
կութեանը համար ըլլայ , որ մը միայն ի-
րեն կեանքը շնորհէ , որ կարենայ խելքը
գլուխը ժողովել ու պատրաստել զինքը Աս-
տուծոյ գիմացը կըլելու : — Այլիւ ժամ-
կու տամ իրեն , խոտութեամբ մը սրա-
տասխան տուաւ նաւապետը , հեռանայ
թող աչքէս :

Ռողալիս գնաց հօրը քովը նստաւ ,
ցաւոյ անդունդի մը մէջ ընկղմած , —
Ո՛հ , հայր , ըսաւ , ժամանակն է՝ հոգիս
մտածէ . երկու ժամէն քու արդար դա-
տաւորիս գիմացը պիտի ելլաս , բոլոր
կեանցդ մէջ գործածներուդ սրտասխան
տալու համար : Մտածէ բոլոր մեղքերդ
որ խոստովանիս պատուական քահանային ,
որ հիմա քու մահապարտ ընկերներդ Աս-
տուծոյ հետ հաշտեցրնել կը ջանայ :

Ի՞նչ օգուտ պիտի ընէ ինձի մեղքերս
խոստովանիլը . Աստուած կրնայ արդեօք
թողութիւն տալ իմ յանցանքներուս , ըսաւ
Հերոնիմոս խոր հաւաչանքով մը :

Պատասխան տուաւ Ռողալիս . — Կը
ներէ Աստուած մեղաւորին , երբոր անիկա
խոնարհ սրտով խոստովանի իր մեղքերը ,

ու սրտանց զղջայ : Յիսուս աւետարանին մէջը ըսաւ , [Ժէ՛ հրկինքը եւելի ուրախութիւն կ'ըլլայ մէկ մեղաւորի մը վրայ որ զղջալով Աստուծոյ կը դառնայ , քան ինչ նրաունքինը արդարնիրու վրայ որ առաքինութեան մէջ հաստատուած կն :

Աւրիշ ատեն լսեր ես անառակին վարքը , բոլոր իր ունեցած բարիքը մնխելով փճացուց , ու ամէն տեսակ անկարգութեան մէջ իյնալէն վերջը , յետին աղքատութեան հասնելով՝ դարձաւ ինկաւ իր հօրը ոտքը ու ըսաւ . “ Հայր , մեղայ յերկինս և առաջիքոյ , չեմ արժանի կոչիլ որդի քո ” . Հօրը սիրտը խշխշայ , և ուրախութեամբ տեսնելով իր տղան զոր կորսուած կը կարծէր , մոռցաւ անոր ապերախտութիւնը և անկարգութիւնը , թեւորբ բացած զրկեց զինքը , հաշտուեցաւ հետը , սրտուոյ և սիրոյ մատնին անցուց մտտը . և փառաւոր կոչուելով հրամայեց անոր դարձին ուրախութիւնը կատարել , [Ժողովիւն տալով ամէն յանցանքներուն :

Հայր՝ ահա սրտաշարժ օրինակ մը . աւանառակ որդւոյն պէս դու ալ փճացուցիր քու երկնաւոր հօրդ բարիքը և շարհար-

ները . արդ հիմա իրեն պէս դիմէ հօրդ ու
դորմութեան գիրկը . խնդրէ թողութիւն ,
և անտարակոյս կը գտնես : Հերոնիմոս
գլուխը շարժեց , ինչպէս տաստիկ նեղու-
թեան մէջ ինկած մարդ մը . բերանը բռո-
նուեցաւ , կուրծքը ուռեցաւ . երբեմն եր-
բեմն հառաչանք մը կը հանէր , ու կարծես
թէ բան մը կը համրէր :

— Այլէ , նայէ , ըսաւ քուր եղած շարա-
գործներէն մէկը , մեղքերը կը համրէ , աղէկ
է աղէկ , փնտռէ , որչափ որ կրնաս՝ բայց ա-
նոնց ծայրը չես հասնիր : Ատառասխան տուաւ
Հերոնիմոս . — Առէ , մի ծաղր ըներ զիս .
մեղքերս չեմ համրեր , ատ անկարելի բան
է . բայց իմ կեանքիս մէջ ըրած բարի գործ-
քերս փնտռեցի , ու չկրցայ գտնալ . միշտ
շարագործութիւն՝ միշտ անօրէնութիւն դի-
մացս կ'եղեն : — Առդալիս լալով ըսաւ ,
քու առաքինութիւններուդ վրայ չէ բանը ,
այլ քու մեղքերուդ և զղջմանդ : Ատա-
րաստուէ որ խոստովանիս . ժամանակը
անցնելու վրայ է :

Աս միջոցիս քանի մը հողի վեր բերին
շարագործներէն մէկը՝ որուն հետ էր պա-
տուական քահանայն , ու ամէնուն դիմա-

ցր կախեցին զինքը կայմէն վար : Աս պատիժը ամէն աւազակներուն սիրտը սոսկում մը ձգեց . ահաւոր լուծիւն մը տիրեց նաւուն մէջ , ծաղր ընողները ձայներնին քաշեցին : Իսկ Սողալիա յարմար առիժ մը սեպելով սկսաւ նորէն ստիպել զհայրը , և անմեղ արցունքովք կը թրջէր զինքը , կ'աղաչէր հոգին մտածել ու խոստովանանքի պատրաստուիլ :

Տուր երկինքը ամպերով գոցած էր , և ծովին գոյնը մթննցած , սոսկալի մըրկի մեծ պատրաստութիւն մը կար : Ամէնուն նեղութիւնը ժամանակ չէր տուած ուշ դնելու երկինքը եղած փոփոխութիւններուն , բայց երբոր յանկարծ ահագին փոթորիկով մը սկսան կայծակներ ինչնայ տաստիկ ձայներով . անանկ սոսկալի տեսարան մը բացուեցաւ որ անկարելի է բերնով բացատրել :

Յաջող ժամանակ դէպ ի յաւիտենակաւ նութիւն ճամբայ ընելու , ըսաւ աւազակներէն մէկը . ինչ աղէկ է կայծակներուն առաջնորդելովք դժոխք երթալ , գոնէ կը տեսնուի հոն եղածները : Ահագին ձայնով մը կանչեց նաւապետը . — Առն կեցիք ,

ալ չափը անցուցիք . ասկէ հտըր պզտի
հայհոյութիւն մ'ալ լսեմ, սաստիկ պիտի
սրտովիմ :

Հերոնիմոս սիրական աղջկանը դիրկն
էր . իր կատաղի աչքերը մըրիկին վրայ
դարձուցած անշարժ պաղեր էր , և մեռած
կը կարծուէր . միայն երբեմն երբեմն հա
ռաչանք մը բնելով կ'իմացընէր թէ ողջ է :

Հանկարծ սոսկալի ձայն մը լսուեցաւ ,
ու նաւը ցնցուելով կեցաւ : — Աորսուե
ցանք կորսուեցանք , կանչեց նաւապետը .
նաւը ժայռի մը զարնուելով մեծ ճեղք մը
բացուեցաւ , և ջուրը ամէն կումէն ներս կը
մտնէ . ամէն մարդ ձեռքէն եկած ջանքը ընէ :

Վառաստիք մէկէն ծովը իջան նայելու
թէ ինչ փտանդի մէջ են , և շուտ մը վեր
կան ըսելով թէ անկարելի է ջուրը դադ
րեցընել , ու նաւը կորսուած է : Ազգե
ցին սպաննելու աւազակները , որ իրենք նա
ւէն չեղած անոնք իրենց սրտովիմը գտնան .
բայց Առդալիա ոտուրնին ինկաւ լարով կ'ը
սէր . աս աղետալի միճակիա մէջ ինչո՞ւ աստ
անցթութիւնդ ալ կ'եւելցընէք . որովհետե
հնար չկայ ամէնը պիտի մեռնին , աս
դառն վայրկեանը ինչո՞ւ կը փութայընէք .

Թողէք թշուառականներուն որ խելունին
գլուխնին բերեն և իրենց փրկութիւնը մտա-
ծեն :

Նաւաստիար ձեռքով նշան մը ըրաւ ,
խնայեցին յանցաւորներուն և շղթանին
քակեցին . մակոյկը ինջիցուցին ծովը ,
մտան մէջը քահանայն ու նաւաստիք . նա-
ւաստիար եկաւ Առզալիային ձեռքէն բռնեց
որ տանի զինքն ալ ազատելու : Բայց ա-
ռաքինի աղջիկը պատասխան տուաւ .
— Հորհակալ եմ քու բարութեանդ ,
բայց զհայրս չեմ ուզեր ձգել . կամ զինքն
ալ հետդ առ , կամ թող զիս ալ որ նաւին
ընկղմած ատենը հոս իրեն հետ մեռնիմ :
Նաւաստիար կարեկից ըլլալով խեղճ աղ-
ջիկանը ըսաւ . — Առզալիա խենդութիւն
է ատ ըրածդ . ժամ մը չեղած նաւը ալիք-
ներով կը լիցուի և ծովուն յատակը կ'ինջ-
նայ . եկու , թող զհայրդ , այնչափ սիրոյ
արժանի մարդ մը չէ : Առզալիա հօրը
պղուած՝ կ'ըսէր , հայրս է , չեմ թողուր :
— Մտածէ ինչ կ'ընես , առանց յանցան-
քի դու զքեզ կը պատժես և մահուան բե-
րանը կը ձգես : — Հոգ չէ , հօրս փրկու-
թիւնը կեանքէս եւելի է ինձի : — Խնն-

դութիւն է ատ քու ծաղիկ հասակիդ մէջ՝
մահը արհամարհել : — Մեծ յանցանք է
ասանկ նեղութեան մէջ երեսի վրայ թո-
ղուլ խեղճ ծնող մը : — Արեմն կ'ուզեն
հոս մնալ . . . Նայէ՛ պիտի զղջաս , բայց ի
չուր : — Ա՛չ երբեք :

— Ա՛յլ աննման աղջիկ , ըսաւ նաւա-
պետը , Ատուած պահէ՛ զքեզ ու վար-
ձատրէ՛ քու ատ առաքինութիւնդ , որ ինք-
զինքդ կը զոհես հօրդ համար : (Թողուց ,
իջաւ մակուկին մէջ տասուիրիք հոգի ալ
հետը և նաւաստիք ու քահանայն : (Թը-
շուառ չարագործներուն անանկ աղատու-
թիւն մը տրուեցաւ , որ ամէն վայրկեան
մահուան սպասել մըն էր :

Ահա Առդալիա անմեղ օրիորդը իր հօ-
րը և վեց աւաղակներու հետ անտէր թո-
ղած էր . մահուան վերահաս վտանգը
անամօթ չարագործները վախի մէջ կը
ձգէր :

Հերոնիմոս իր վէրքերէն շատ արիւն
կորանցրնելով տկարացած էր մարմնով , ու
հոգեով միշտ հիւանդ՝ անշարժ կը նստէր
կայմին տակը : Հոյլը երթալով կը սաստ-
կանար . ծովուն ալիքները կը մեծնային , ու

երկինքը անդադար փայլակներով կայծակներով կը դուար . նաւը քայքայելու վրայ էր : Աւազակները տեսնելով որ ալ փրկութեան յոյս չկայ իրենց համար , կտորեցին նաւին կայմերը , ու անոնց վրայ կապելով վերինք՝ ծովը ինջեցուցին ու ջուրին կատաղութեանը թողուցին :

Ռողալիա մինակ մնաց իր հօրը հետ . ջրով ծանրացած նաւուն մէջ . ծնկան վրայ եկաւ ու լալով նորէն խնդրեց Աստուծոյ օգնութիւնը Հերոնիմոսին հոգւոյն փրկութեանը համար : Ատրը քաջաւերուած ոտք ելաւ ու սկսաւ փնտռել լաթի կտորուանք ողորմելի հօրը վէրքերը պատելու համար : Աւտելիք գտաւ ու բերաւ հօրը . պզտի անկողին մը շինեց ու վրան պառկեցուց , և զարմանալի քաջասրտութեամբ մը բոլոր վէրքերը պատեց :

Հերոնիմոս տեսնելով իր աղջկանը որ գլխական սէրը , ու ինքը զինքը յայտնապէս մահուան վտանդի մէջ ձգելը , քարացեալ սիրտը կակրոցյաւ , անյուսութեան կապերը թուցան և սկսաւ լալ . երկնացոյց գողգոթուն ձեռքը մարմնաւոր հրեշտակին վրայ որ անդադար զինքը կը հոգար : Աւ

Հատաչանքով մը ըսաւ . — Այս արժանի
եմ առանկ ազնիւ աղջիկ մը ունենալու . ո՛հ,
աս ի՛նչ հատուցումն է, իրեն դէմ ըրած
այնչափ չարիքներէս վերջը . իբրև անարգ
դերի մը զինքը ծախելէս ետքը, առանկ
մեծանձնութեամբ իմ աքսորանացս ընկեր
կ'ըլլայ սիրով, ու իր կեանքը ինձի կը
հուփրէ : Ա՛յ նազելի աղջիկս, դքեզ չեմ
սիրած . քու առաքինութիւնդ չեմ ճանչ
յած, ներէ քու հօրդ որչափ որ նեղու
թիւն տուեր է քեզի . աղօթէ ինձի համար
սիրուն զաւակս, որ չկորսուի հոգիս առանց
թողութիւնը դանելու իր մեղքերուն : Ի
րաւ, Աստուած վրէժխնդիր է . վերջի
վայրկենիս մէջ ամենայն արարածք աս
բանս ինձի կ'ըսեն . բայց կրնայ ըլլալ որ
ներէ ինձի՝ զաւակիս առաքինութիւնները
նայելով : Ա՛ս ըսաւ և գուրգուրալով մը
սիրով ինկաւ իր անուշ Առդալիային վրայ
ու գրկեց :

Անկարելի է խօսքով բացատրել առա
քինի աղջկան սրտին ուրախութիւնը, եր
բոր լսեց աս խօսքերս : Ա՛հա իր վախ
ճանին հասաւ որուն համար սիրար կը
հատնէր և անդադար կ'աշխատէր : Զե

րոնխմոս աղօթք կ'ուզէ՝ շնորհք կը խընդրէ . Հերոնխմոս յանցանքները կը ճանչնայ , ասլաշխարող է : Ասկէց վերջը Ռոզալիա ուրիշ փափաք մը չունի : Մահը կընար առնելու իր հոգին որ սլատրատական զոհ էր Աստուծոյ . վասն զի հայրը իր մոլորութիւնը ճանչցեր էր :

Ռոզալիա ամենեկն ուշ չգրաւ օղին խոտլութեան , որ անդադար կը սաստկանար . սրտին չափազանց ուրախութենէն իրմէ դուրս ելած էր , և չէր զգար չորս կողմի եղած բաները :

Վ իզէն կախած խաչը ձեռքը բռնեց , ու տուաւ հօրը որ սիրով սրագնէ :

— Մ՛հ , իրաւցրնէ կամաց կամաց կը ճանչնամ , ըսաւ , որ մեծ մեղաւոր եմ , աշխարհքիս ամէն մեղաւորներէն մեծ : Արկարատեն Աստուծոյ շնորհքը արհամարհեցի , երկարատեն անոր համբերութեանը դէմ իմ չարութիւններս շատցուցի : Ա՛յլ Աստուած իմ , փրկիչ իմ , կ'ըսէր արտասուալից աչքով , համբուրելով խաչեցելոյն սլատկերը , ընդունէ խոնարհ խոստովանութիւնս , ներէ թշուառիս որ զուրկ եմ մեղքերս քու սլաշտօնէիդ խոստովանելու

քաղցր մխիթարութենէն : Ի խորոյ սրտէ սաստիկ կը ցաւիմ որ զքեզ այսչափ մշտացուցի . ա՛հ , պէտք էր ինձի բիւր անդամ մեռնիլ . և սրտորաստ եմ բոլոր արիւնս տալ իմ մեղքերս ջնջելու համար : Եւ հառաչանքով կը զարնէր կուրծքին ու զղջմամբ կու լար :

Քիչ մը ատենէն մերջը տկար ձայնով մը ըսաւ Ռոզալիային . — Եղջիկս աղօթք ըրէ ինձի համար , մասն զև կարծեմ որ հիմա պիտի մեռնիմ : Ռոզալիա զիմացը չողած՝ սրտաշարժ ձայնով մը ըրաւ միտքը եկած ամէն աղօթքները . Հերոնիմոս ալ հեկեկալով հետը կը զրուցէր : Աղորմելի հիւանդը կամաց կամաց բողբոլիմ կը տկարանար : Երաքինի աղջիկը կը ջանար օգնել , զօրացընել , բայց ճար մը ընելու բան չունէր . ուստի միայն մխիթարելու հետ էր :

Ահս օրուան մօտ հանդարտեցաւ մերիկը , ու հիւանդը սկսաւ եւելլի հանդիստ շունչ առնել տալ : — Փառք Եստուծոյ , ըսաւ Ռոզալիա ինքն իրեն , յուսամ որ հայրս հիմա չմեռնիր , և կեանքը կը շնորհէ իրեն Եստուած : Ինչուան որ լաւ մը

խոտուխանի մեղքերը : Աւտի ալ աւելի
հոգեոր խնամքը շատցուց , սիրտ տուաւ ,
բարի առաջադրութիւններու մէջ հաստա-
տեց , ու կամաց կամաց զօրացուց յոյսը
Աստուծոյ ողորմութեանը վրայ :

Այսպէս օրուան մէկ մասը անցաւ . ի-
րիկուան մօտ Առօղալիա տեսաւ հեռուէն
ծովուն վրայ ճանճի մեծութեամբ սլզտի
կէտ մը որ քիչ քիչ կը մեծնար . և որով
հետեւ ծովու ճամբորդութիւն չէր ըրած ,
չիմանալով թէ ինչ պիտի ըլլայ աս , հար-
ցուց հօրը : — Անտարակցս նաւ մըն է ,
ըսաւ Հերոնիմոս , որ կը մօտենայ . նայէ
երբոր աւելի որոշ երևայ՝ նշան մը տուր որ
մեզ տեսնեն ու դան ազատեն :

Առօղալիա քիչ մը սպասելէն ետքը , երբ
մօտեցաւ նաւը , սկսաւ ձայնով օգնութիւն
կանչել , բայց իր նուազ ձայնը կը կորսուէր
ալիքներուն դռապէն որ մէկ մէկու հակե-
կու գային , կը զարնէին ճեղքուած նա-
ւուն : Ան ատենը Առօղալիա երկայն փայտ
մը առաւ , ու անոր ճոթը կապեց թաշ-
կինաակը և օգուն մէջ կը շարժէր : Հրա-
ցանի մը ձայն լսելով սկսաւ դողալ վախէն :
— Մի վախնար աղջիկս , ըսաւ Հերոնի-

մոս, աս աղէկ նշան է, վասն զի տեսեր են
 զմեզ և կու գան ազատելու: Աւ իրաւցնէ
 քիչ մը ատենէն վերջը երեցաւ մակոյկ մը
 որ մեղմաշարժ ալիքներուն վրայէն սահե-
 լով կը մօտենար, զոր չորս զօրաւոր մար-
 դիկ կը վարէին, ու եկաւ նաւին քովը կե-
 ցաւ: Մաւատիները շուտ մը վեր ելան, ու
 գտան Ռողալիան ու Հերոնիմոսը, սլար-
 տեցան նաւուն չորս կողմը յուսալով քանի
 մը բան գտնել և հետերնին տանիլ, բայց
 ջուրը ամէն կողմէն ներս մտեր էր, և իբրև
 հրաշքով մը աս ջախջախած նաւը գեռ չէր
 ընկղմած: Ռողալիա հառաչանք մը ըրաւ,
 ու Հերոնիմոս հասկրցաւ թէ Մստուծոյ
 մասնաւոր սղորմութիւնը փրկեր է զիրենք,
 ու վկայեց որ աղջկանը բարեպաշտութիւնը
 և որդիական սիրոյ առաքինութիւնը աս
 շնորհքին պատճառ եղաւ, ուստի փառք
 տուաւ Մստուծոյ:

Մաւատիները գրկերնին առած՝ մակոյ-
 կը տարին զհիւանդը, նայնպէս Ռողալիան
 ալ մտաւ, և այսպէս աս երկու խեղճերը
 ազատեցան՝ երթալով մեկալ նաւը որ հե-
 ոուն կ'ըսպասէր իրենց:

Աս սպանեացոյ նաւ մըն էր որ դէպ ի

արևելեան ծովը կ'երթար . Հերոնիմոս իրեն հարկաւոր եղած ամէն պիտոյքը դտաւ հոս , ու փոխանակ առջի քաշած նեղութիւններուն , աղէկ խնամք և ծառայութիւնս Մտնց վերաբուժը նախ սլատեց վէրքերը առանց գիտնալու թէ ինչպէս առեր է . և նաւը դեռ Մալթա կղզին չմտած , հիւանդը հերիք զօրացաւ և ոտք ելաւ : Աւստի սուրբ Յովհաննէսի կարգէն քանի մը ազնուական ասպետներու հետ՝ Առզալիա ու իր հայրը Մալթա մնացին . հոն հասարակաց հիւանդանոցը մտան , ու քիչ ատենէն Հերոնիմոս բոլորովին առողջացաւ :

Աս անդամուս հաւատարիմ մնաց իր խոստումները մէջ . խոստովանեցաւ պարզ մտութեամբ և ճշմարիտ զղջմամբ , ու եղաւ նոր մարդ մը : Աստուծոյ շնորհքը՝ իր հպարտ սիրտը կակղցուցեր էր , ան սիրտը որ այնչափ տարի անօրէնութեամբ կը պատերազմէր իր ստեղծողին դէմ , վերջապէս խոնարհեցաւ ճանչցաւ իր ոչնչութիւնը . իր առջի հայհոյութիւններուն տեղը , յաջորդեց կենդանի ետանդ մը և օրհնութիւն առ Աստուած . հաւատոյ սուրբ խորհուրդները և աւետարանական խրատները ծաղը

ընկու տեղը, խորին պատկառանք մը կը
ցուցնէր կրօնքի ու անոր փառաւոր արա-
րողութեանցը, և փոխանակ մոլութեանց,
տեսակ տեսակ առաքինական գործքեր կը
փայլէր վրան :

Մեծ երջանկութիւն էր Սողաշայի
կրօնը հօրը քուլը նստած խրատական զիրք
մը կը կարգար, ու կը տեսնար անխկայ որ
խելքը գլուխը ժողոված ուշ դնելէն ետքը,
սիրտը կը շարժէր, ու վերջապէս լացով
ողջով նորէն մեղքերուն ժողութիւն կը
խնդրէր Աստուծմէ, բարեսրաշտ ական բոր
բոքեալ սիրով մը : Հերոնխմոս Աստուծմէ
վերջը, ամէն փոյթը պակաս չէր ընէր իր
սիրելի աղջկանը վրայէն, մասնաւոր յար-
գութեամբ մը կը խօսէր անոր հետ, ու
զովելով ինչուան երկինք կը բարձրացը-
նէր :

Օր մը ծովեզերքը պտըտելու ատեն,
դիմացինն ելաւ ծեր ասպետ մը, ան կար-
գէն որոնց ձեռքն էր Մալթա կղզոյն
տէրութիւնը : Աս մարդը Հերոնխմոսին
շատ բաներ հարցուց և հետը երկար խօսե-
լու ատեն, յանկարծ քաղաքին զանգակ-
ներուն ձայնը լսուեցաւ, և տեսան որ թան-

ձրբ մուխ մը կ'ելէր ծովեղերքի մօտ տան
մը պատուհաններէն :

Հերոնիմոս մէկէն հրաժարեցաւ ան առ-
պետէն , մտաւ քաղաքը ու կրակի տեղւոյն
մօտեցաւ : Դողուլուրդը բազմութեամբ կը
վազէր վառած տանը չորս կողմը , և ամէն
գիաց օգնութեան կը հասնէին . մեծ յոյս
կար որ գիւրութեամբ ազատին ան աղէ-
տալի փորձանքէն . բայց յանկարծակի տառ-
տիկ հով մը ելաւ , ու կայծակի պէս արա-
դութեամբ բոցը առաւ քովի տունը , մին-
չև հազիւ տեսնուեցաւ կրակին ցաթկերը :

Տեսնելով առ նոր խեղճութիւնը յու-
սահատութեան աղաղակ մը սկսաւ ամէն
կողմէն՝ վախնալով բոլոր քաղաքին հա-
մար : Ասպետներուն նախագահը դունդ-
մը ազնուականներով հասաւ հոն , ու սկսաւ
ամէն ջանք ընել կրակին առաջը առնելու
համար . բայց ինքը և իր հազարաւոր
մարդիկը ի զուր կը ջանային . կրակը եր-
թալով կը մեծնար և կը տարածուէր , ու
բոլոր քաղաքացիք ահաւ դողու մէջ կը
ձգէր :

Ան յուսահատ խեղճութեան մէջ յան-
կարծ կանչուերտեղու ողբալի աղաղակ մը

եղաւ բոցերու մէջ բորնկած տունէ մը ,
և կը տեսնուէր կնիկ մը երկու զաւակը
դրկած պատուհանէն լայով կ'աղաչէր ժո-
ղովուրդեան որ ազատեն զինքը ու զակը-
ները : Ժողովուրդը ձեռքով ձայնով կ'ի-
մայրնէր խեղճ կնկանը թէ տեսան զինքը .
բայց մէկը չզտնուեցաւ որ սիրտ ընէր ել-
լի ազատել զանոնք . վտանգը երթալով
կը մօտենար :

Հոն օտարական մը , մէկէն չողեցաւ
կարճ աղօթք մը ըրաւ , երեսը խաչ հա-
նեց , ոտք եղաւ ու ըսաւ . — Աս դրժ-
բաղդութեամբս իրեք մարդ մեռցուցեր եմ ,
կ'երթամ հիմա ազատելու աս իրեք հողին
Աստուծոյ արդարութեանը իմ սրարտքս
վճարելու համար . սիրտս հաշտ է Աս-
տուծոյ հետ , բանէ մը վախ չունիմ . աղ-
ջկանս վրայ հող ունեցէք , որ հիմա հա-
տարակաց հիւանդանոցն է : Աս ըսաւ ,
ու վազեց սանդուխ մը դտաւ , զարմանա-
լի արագութեամբ կանգնեց տանը պա-
տին , ու ջնայելով այրած փայտի կտոր-
ներուն որ վերէն գլխուն վրայ կ'իյնային ,
եղաւ ինչուան պատուհանը : Աս մեծ եղ-
բայրսիրութիւնը ու զինքը վտանգի մէջ ձգե-

ը տեսնելով ժողովուրդը, գտնելով զինքը և սիրտ տալով անդադար կը պսոպային : Աս մարդս զրկեց երկու տղաքը իջաւ վար , ու նախադահ իշխանին գլխացը դրաւ , որ հոն եկեր էր եղածը տեսնելու : Դեռ բաւական չսեպելով երկու տղոց կեանքը ազատելը , վազեց մէյ մ'ալ սանդուխէն վեր ու արագութեամբ կնիկն ալ յախշտակեց զրեթէ բոցին մէջէն ու խալըսցուց . բայց ուժը կտրած հոնկէ փոխչելու ատենը , տանիքէն այրած գերան մը ինկաւ ու մեռցուց աս առաքինի մարդը : Ահա այսպէս Հերոնիմոս որ ատենօք մեծ մեղաւոր մըն էր՝ եղայրասիրութեան զոհ եղաւ . ու իր գեղեցիկ առաքինութեամբը կենացը մէջ ըրած մեղքերը քաւեց :

Ռողալիա շուտ մը խմացաւ հօրը մահը , ու իր որդիական անհամեմատ սիրոյն պատշաճ լեղի արցունքներով ողբաց զինքը : Քաղաքը փառաւոր թաղում ըրաւ աս մարդուս , որուն յուղարկաւորութեան եկան ամէն ասպետները , նախադահ իշխանը ու քաղաքին գլխաւոր մեծերը : Այսպէս փառաւոր պատիւ մը չէր տրուած ամենեւին անժամօթ՝ աղքատ օտարականի մը :

Ռողալիայի շատ ընծաներ տալէն վերջը
ուզեցին նաև թողակ կապել ու օժիտ տալ
իրեն՝ թէ որ յօժարի հոն մնալ և կար-
գուիլ . բայց առաքինի աղջիկը խնայուց
որ կ'ուզէ Սիկիլիա դառնալ, և թէ իր կե-
նաց վիճակը շատ ատենէ ի վեր որոշած
է : Աւտի գահերէց իշխանը զինքը Փա-
լերմոյ խրկեց ասպետութեան կարգի նաւով
մը, ճամբորդութեան հարկաւոր եղածնե-
րը առատութեամբ զնելով հետը :

Ռողալիա Փալերմոյ քաղաքը հասնե-
լով, գնաց Ալինալտի կոմսը գտնելու, և
պատմեց անոր՝ հօրը գլխէն անցածները,
առանց խնայրնելու թէ զինքը մահուան
վտանգի մէջ դրէր է անոր փրկութեանը
համար :

Կոմսը ու իր խաթունը ամէն ջանք և
հնարք բանեցուցին որ տուներնին պահեն
զինքը, բայց Ռողալիա չուզեց . և իրեք
ամիսէն վերջը կուսութեան պայծառ քօղ-
քը առաւ՝ ան վանքին մէջ ուր երբեմն եր-
ջանիկ կեանք մը անցուցեր էր :

Վիկտորիա իրեն սիրուն բարեկամն ալ
նոյն ճամբան բռնեց . ամենևին յանձն
չառաւ իր ազնիւ ծնողացը առաջադրու-

Թիւնը որ կ'ուզէին զինքը կարգել . ու ան
օրը որ Ռոզալիա իր ուխտը կատարեց ,
նոյն օրը աս ազնուական աղջիկն ալ կու-
սութեան քօղքը առաւ , ինքը զինքը Աս-
տուծոյ նուիրելով , նոյն երկրաւոր դրախ-
տին մէջը :



Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ



Գ Լ .	Ս .	Քրիստոնեայ մայր մը . . .	5
Գ Լ .	Բ .	Բարեպաշտ յորդոր . . .	14
Գ Լ .	Գ .	Որդիական սէր	27
Գ Լ .	Դ .	Անողորմ հայր մը	40
Գ Լ .	Ն .	Վանքի մը դուռ	50
Գ Լ .	Զ .	Գժբաղդ պատահար	63
Գ Լ .	Է .	Զարմանալի հու՛իրումն ան ձին	74
Գ Լ .	Ը .	Աւարքի հու՛թեան վարձ	97

17. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100.

| Էջ . Տող . | Վրիպակ | Ուղիղ |
|------------|--------------|-------------|
| 17 . 17 . | Հաւտարիմ | Հաւատարիմ |
| 44 . 25 . | Խնկողոսին | Նխկողոսին |
| 50 . 6 . | և կսաւ | և սկսաւ |
| 65 . 6 . | վար մունքը | վարմունքը |
| 70 . 12 . | ամփոփու մը | ամփոփումը |
| 107 . 13 . | ամէն կոմէն | ամէն կողմէն |
| 112 . 7 . | Հայ բըր | Հայրը իր |
| 117 . 12 . | " պաշտ ա կան | " պաշտական |
| 120 . 10 . | փոխչելու | փախչելու |

| Blatt | Abdruck | Blatt | Abdruck |
|-------|---------|-------|---------|
| 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 |
| 29 | 29 | 29 | 29 |
| 30 | 30 | 30 | 30 |

4822-4827

2013

